

Ո՞Ր ԼԵՌԱՆ ՎՐԱ Է ԻԶԵԼ ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆԸ

(Ըստ ասորա-բաբելական, հունա-հռոմեական, ասորական և հայկական աղբյուրների)

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՋՐՀԵՂԵՂԻ ԵՆՈՒՄԵՐԱ-ԱԳՔԱԴԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԴԵԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Անդրապատմական ջրհեղեղի մասին պատմող ավանդույթյուններ սլահ-պանվել են բազմաթիվ ժողովուրդների բանահյուսույթյուններում: Ներկայումս ամենից տարածված և թերևս ամենահին առասպելը ծագել է Առաջավոր Ասիայում, նրա հայրենիքը պեաք է համարել Միջագետքը և Հայկական լեռնաշխարհը: Առաջինն իր ցածրագիր հարթավայրով և երկու հորդահոս գետերով (Տիգրիս և Եփրատ) անհիշելի ժամանակից ենթակա է եղել ջրհեղեղի սպառնալիքին և ծնունդ է տվել շումերա-աքքադական առասպելներին ջրհեղեղի մասին: Երկրորդի՝ Հայկական լեռնաշխարհի հետ պատմական ավանդույթն ի սկզբանե անտի կապել է ջրհեղեղի փրկվելու մարդկույթյան հույսը:

Համոզված կարելի է ասել, որ Գիլգամեշի էպոսը և ջրհեղեղի ավանդույթյունը հայտնի են եղել նաև ուրարտական շրջանի Հայաստանում: Ինչպես ցույց են տվել պատմական գիտությունների գոկոորներ Ի. Մ. Դյակոնովը և Ն. Բ. Յանկովսկայան, Գիլգամեշի էպոսի եզրավակիչ դրվագի թեմայով ներկայացում է բեմադրվել ուրարտական արքունիքում, հայտնորեն, Սարգուրի II-ի թագադրման պատվին, որը դահ է բարձրացել մ.թ.ա. մոտ 760 թ. էլամի նոր թագավորական դինաստիայի հիմնադիր Հումբանտահրահուի հետ միաժամանակ: Բեմադրման էլամերեն բնագիրը պարունակող երեք կավե տախտակ հայտնաբերվել է Արմավիրի (Արգիշ-տիխինեղե) պեղումների ժամանակ՝ Գևորգ Տիրացյանի ղեկավարած արշավախմբի կողմից: Ենթադրվում է, որ թագադրումը ղուդակցվել է Ուրարտուի արքայի և էլամի արքայադստեր պսակադրման հանդեսով, որին մասնակցել է էլամական թատերախումբը: Հիշյալ ներկայացման սեպագիր տեքստում ակնարկներ կան թե՛ ջրհեղեղի աքքադական առասպելի և թե՛ աքքադական Նոյի՝ Ութ-նապիշտիմի անմահության արժանանալու մասին:

Խոսական բանասիրության և բանադիտության մեջ դիտարկված են ջրհեղեղի առասպելի շումերա-աքքադական, ասորա-բաբելական, քաղ-

1 И. М. Дьяконов и Н. Б. Янковская. Эламский диалог Гильгамеша и Сидури и другие эламские тексты из Аргиштихинеле (Арманир). — "Историко-филологический журнал", 1989, № 2, с. 61—62.

2 Նույն տեղում, էջ 60.

դեպի և երբայական խմբադրություններ, որոնք իրար հետ աղերսվում են մեկ ընդհանուր բանահյուսական-վիպական հենքով՝ չնայած դրանց միջև եղած որոշակի, երբեմն նույնիսկ շատ էական տարբերություններին: Այս բոլոր առասպելները միավորում է մի ընդհանուր հերոս, որը ինքնաշեն նավով կամ տապանով փրկվում է ջրհեղեղից և կրում է ըստ էության մեկ ընդհանուր անուն (բացի Նոյից)՝ չնայած որ նա տարբեր կերպ է կոչվում տարբեր առասպելներում: Շումերական առասպելում հերոսի անունն է Զիուսուդրա, շումերների լեզվով՝ «ևրկար օրերի կյանք (այսինքն անմահությունը) գտած»³: Աքքադական առասպելում և բաբելոնյան «Գիլգամեշ» էպոսում (տախտակ XI) այդ հերոսը կոչվում է Ութ-Նապիշտիմ՝ «զտավ շունչ»⁴, որ փաստորեն Զիուսուդրա անվան աքքադերեն թարգմանությունն է: Իսկ Բերոսոսի քաղաքական սլատմության մեջ նա կոչվել է Քսիսութրոս, ինչպես և Սիսութրոս կամ Սիսիթրոս⁵, որոնք պարզապես Զիուսուդրա անվան հելլենացված ձևերն են⁶: Կնչանակի, նախնական շումերական Զիուսուդրա անունը փոխանցվել է բոլոր հետագա այլալեզու ավանդություններին՝ թարգմանաբար կամ հունարեն տառադարձումով:

Միայն երբայական ավանդության մեջ Նոյ անունն (եբր. Noah, հուն. Νωε, լատ. Noachus) այլ իմաստ ունի՝ «հանգիստ», «մխիթարություն» կամ «հանգստացնող»⁷: Այս հանգամանքը, ինչպես և Նոյան տապանի հանգրվանելը Արարատ երկրի լեռներում, մեր կարծիքով, թույլ են տալիս խոսել Համաշխարհային Ջրհեղեղի հայ-եբրայական ավանդության մասին, հակառակ որի Ջրհեղեղի շումերա-աքքադական սոսակները սոսկ տեղական բնույթ էր կրում և կապված էր Միջագետքի երկու հորհազոս դետերի պարբերական վարարման հետ:

Ավելի ընդարձակ հրատարակության թղթելով այս առասպելների ազգակցության համեմատական քննությունը, այստեղ կանգնադառնանք ներկա ուսումնասիրության համար առավել կարևոր և առավել վիճելի հարցին՝ ո՞ր լեռան վրա է իջել Նոյան տապանը և ո՞րտեղ է գտնվում այդ լեռը:

ԱՐԱՐԱՏԸ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ

Համաշխարհային Ջրհեղեղի հայ-եբրայական ավանդությունը պահպանվել է եբրայական Կտակարանի Ծննդոց գրքում, որը Նոյան տապանի

3 В. К. Афанасьев а. Зиусудра. — "Мифы народов мира", т. I, М., 1980, с. 467.

4 Նույն տեղում, էջ 467:

5 Քսիսութրոս անունը Ջրհեղեղի ավանդության հետ վերցրել են Ալեքսանդր Բաղմավեպը և Աբյուդենոսը, իսկ նրանցից էլ՝ Եվսեբիոս Կեսարացին («Ժամանակականք») և Մովսես Խորենացին (Պատմութիւն Հայոց, գիրք Ա, գլ. 7 և 8): Իսկ Սիսութրոս (Σισουθρος) կամ Սիսիթրոս (Σισιθρος) ձևը հանդիպում է Աբյուդենոսի մոտ՝ Եվսեբիոսի (Praeparatio Evangelica) և Սինկլլոսի քաղվածքներում:

6 Բառարան Սուրբ Գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 420:

7 Мифы народов мира II, с. 224. Նոյի անվան այս ստուգաբանությանը հավանորեն ծանոթ է նաև Մովսես Խորենացին, որը «Հայոց Պատմության» սկզբում (Ա, 7, էջ 16) բերում է Նոյի հոր՝ Լամեքի մարգարեական խոսքը որդու ծննդյան առթիվ. «Սա, ասէ, հանգուցէ (հանգստացնի— Ա. Մ.) գմեզ ի գործոց [մերոց] և ի տրտմութենէ (Ծննդ. ի սրտմութեանց) ձեռաց և յերկրէ՝ զոր անէծ տէր Աստված» (Ծննդ. Ե, 29):

իջման մասին հաղորդում է այսպես (gen. 8,4). “Vatanax hatava baxodeš haševii besivaasar yom laxode š al harey Ararat” (եվ կանգ առավ տապանը յոթերորդ ամսին, ամսի տասնյոթերորդ օրը Արարատ(ի) լեռներում):

Հունարեն Septuaginta («Յոթանասնից») թարգմանությունն⁸ այստեղ ունի՝ “Και ἐκαθισεν ἡ κιβωτὸς ἐν μηνὶ τῷ ἑβδόμῳ, ἑβδόμη και εικαδὶ τοῦ μηνός, ἐπι τὰ ὄρη τὰ Αραράτ”⁹ (Gen. 8,4).

Հայերեն Աստվածաշունչը, որ թարգմանվել է V դ. առաջին տասնամյակներին հունարենից՝ Սահակ Պարթև կաթողիկոսի ձեռքով, հաղորդում է՝ «Եւ նստաւ տապանն յեօթներորդում ամսեանն ի քսան եւ յեօթն ամսոյն ի լերինս Արարատայ» (Ծննդ. Ը, 4):

Մինչև այժմ էլ բուռն վեճեր են գնում այն մասին, թե ինչպես պետք է հասկանալ եբրայերեն Ծննդոց գրքի սույն վկայության մեջ Արարատ անունը՝ լեռան, թե՞ երկրի անուն: Բանասերներն իրարամերժ կարծիքներ են հայտնել եբր. al harey Ararat և դրանից թարգմանված հունարեն ἐπι τὰ ὄρη τὰ Αραράτ բառակապակցության ստույգ իմաստի վերաբերյալ, որ հայը թարգմանել է «ի լերինս Արարատայ»: Հունարեն բառակապակցության մեջ Արարատ անունը գործածված է ոչ թե սեռական հոլովով հատկացուցչի, այլ եբրայերենի նման՝ ուղղակի բացահայտչի ձևով՝ հոգնակի հայցական հոլովով և կարող է թարգմանվել «Արարատ լեռներում», որից և ծագել է Նոյան տապանի լեռան Արարատ անունը: Ուստի կարելի է ասել՝ Արարատն իբրև տապանակիր լեռան անուն գալիս է «Յոթանասնից» կոչված հունարեն հին կտակարանից և նույնքան էլ պատկառելի հնություն ունի:

Արդյո՞ք Նոյան տապանն իջել է Արարատ կոչվող լեռներին, թե՞ Արարատ երկրի լեռներին: Ամենեւին էլ կարևոր է, թե մենք այսօր ինչպես ենք մեկնաբանում այդ բառակապակցությունը: Հակառակ մինչև այժմ հնչած թերևեմ կարծիքների, կարող ենք պնդել, որ V դ. հայ թարգմանիչը ἐπι τὰ ὄρη τὰ Αραράτ միանշանակ ընկալել է ոչ թե «Արարատ (կոչված) լեռներին», այլ «Արարատ (երկրի) լեռներին», այսինքն՝ եբրայական կտակարանի Ծննդոց գրքում Արարատ ոչ թե լեռան, այլ երկրի անուն է: Եվ իրոք, Արարատ անունը Հին կտակարանում գործածված է հինգ անգամ (Ծննդ. Ը, 4, Դ Թագ. ԺԹ, 37, Ես. ԼԷ, 38, Երեմ. ՄԱ, 27, Տովբիթ Ա, 24), ըստ որում եբրայերենում այն երկու անգամ կոչված է երկիր (II Թագ. 19, 37 և Ես. 37, 38)¹⁰ և մեկ անգամ՝ թագավորություն (Երեմ. 51, 27): Իսկ թե ո՞ր երկրի մասին է խոսքը, այս հարցին ևս հնուց ի վեր աներկբա պատաս-

8 Septuaginta. Id ast Vetus Testamentum graeca iuxta LXX interpretes. Deutsche Bibelstiftung. Stuttgart, 1935, p. 11.

9 Ենթադրվում է, որ Ծննդոց գրքի հունարեն թարգմանության մեջ սկզբնապես եղել է του Ararat (եզակի սեռական հոլովով), ինչպես հանդիպում է Աստվածաշնչի 1126 թ. մի հունարեն ձեռագրում (Codex Oxeniensis), որից էլ Հայերեն հին թարգմանությունը «Արարատայ» ձևն ունի: Բայց այդ ենթադրյալ աղավաղումը պետք է տեղի ունեցած լիներ գեոևս Հովհան Ոսկեբերանից առաջ (+405 թ.), որի Ծննդոց գրքի մեկնության մեջ ևս Նոյան տապանն իջնում է ἐπι τὰ ὄρη τὰ Αραράτ (M i g n e. Patrologia Graeca, tom. 53, col. 234).

10 Եբրայերեն կտակարանի II Թագաւորաց (Եբրայերեն՝ Մաաքիմ) գիրքը համապատասխանում է Հայերեն Աստվածաշնչի Դ. Թագաւորութեանց գրքին, քանի որ եբրայերեն բնագրում Ա և Բ. Թագաւորաց գրքերը վերնագրված են «I և II Գիրք Սամուէլի»:

խան է արված: Դա ասորա-բարեկական սեպագիր արձանագրություններում հիշատակվող Ուրարտու երկիրն է, Հայաստանը: Արարատ-Հայաստան նույնությունը անառարկելիորեն ամրապնդված է այնպիսի դասական հուշարձաններում, ինչպիսիք են եբրայական Հին կտակարանի հունարեն «Յսթանասնից» (Septuaginta)¹¹, լատիներեն (Vulgata)¹² և հայերեն (գրաբար)¹³ թարգմանությունները: Դա երևում է հետևյալ գրվագներից: Հունարեն Մենդոց գրքի τὰ ὄρη [ta] Αραράτ բառակապակցությունը կրկին հանդիպում է հունարեն Հին կտակարանի Τωβίτ (Tobias) գրքում՝ και ἔφυσον εἰς τὰ ὄρη Αραράτ (1, 24)¹⁴, որ հայն այս անգամ ավելի որոշակի թարգմանել է «և փսխեան նոքա ի լերինս Հայոց» (Տովբիթ, Ա. 24)¹⁵: Կնչանակի, «ի լերինս Արարատայ» խոսքը ևս Մենդոց գրքում պետք է հասկանալ «ի լերինս Հայոց», այսինքն՝ Արարատ երկրի Հայաստանի լեռներին: Այսպես էլ հասկացել է լատիներեն Հին կտակարանի՝ Vulgata-ի թարգմանիչ Հիերոնիմոսը, երբ. al harey Ararat թարգմանելով լատիներեն super montes Armeniae (Հայաստանի լեռների վրա): Սրանով իսկ Հիերոնիմոսը հակադրվում է «Յսթանասնից» հունարեն թարգմանությունը հաստատելով, որ եբրայերեն բնագրի Սրարատը Հայաստան երկիրն է, այլ ոչ թե լեռնանուն, ճիշտ այնպես, ինչպես րնկայել է V դ. հայ թարգմանիչը:

Հրեա պատմագիր Հովսեպոս Փլավիոսը (մ.թ. I դ.), որին զժվար է կատարել կիրայերենը թյուրքմոտեղու մեջ, հետևելով Մովսես մարգարեի Մենդոց գրքին, նույնպես գրում է «Հրեական հնախոսություն» մեջ (I, 90)՝ «[Նոքոսի] տապանը կանգ առավ ինչ-որ լեռան դագաթին՝ Հայաստանում» («ἔπειτα τῆς Ἀρνακὸς περὶ ἄκραν τινα ὄρους σταθεῖσθαι κατὰ τῆν Ἀρμενίαν»): Այսպես միանգամից բացահայտվում է երկու իրողություն՝ ըստ Փլավիոսի եբրայերեն Մենդոց գրքի ջրհեղեղի գրվագում հիշված Արարատը Հայաստան երկիրն է, իսկ տապանը կանգ է առել մի լեռան վրա, որի անունը Փլավիոսն այստեղ չի հիշատակում:

Արարատ-Հայաստան նույնությունը հաջորդ անհերքելի ապացույցը մեղ տալիս է Ասորեստանի Սենեքերիմ թագավորի սպանությունից արվագը, որը Հին կտակարանում ունի երեք զուգահեռ վկայություն: Եբրայերեն բնագրում Երկրորդ Թագավորաց գրքի (19,37) և Եսայիի մարգարեություն (37,38) զուգահեռ վկայություններում ասված է, թե երբ Ասորեստանի Սենեքերիմ թագավորը Նինվեում երկրպագում էր իր Աստծուն՝ Նևրաքի կռասանը, նրա որդիները՝ Ագրամելեք և Սարասար, սպանեցին նրան սրով, և իրենք փախան Արարատի երկիրը: Թեև Դ թագաւորաց գրքում

11 Մ.թ.ա. III դ. առաջին կեսին 72 գիտնական-եբրայագետ եգիպտոսի թագավոր Պտղոմեոս Եբրայասերի (Ֆելագելֆոսի 285-246) ստուգելով Ալեքսանդրիայում բնագրից հունարեն թարգմանեցին եբրայական (Հին) կտակարանը, որը և կոչվեց Septuaginta («Յսթանասնից»):

12 Աստվածաշնչի Հին և Նոր կտակարանների լատիներեն թարգմանությունը կատարել է Նշանավոր աստվածաբան և մեկնիչ Հիերոնիմոսը (330-419 կամ 420 թթ.) և թողել անսփարա հասնելով մինչև Նոր կտակարանի Գործք Առաքելոց գիրքը:

13 Ըստ Կորյունի, հայերեն Աստվածաշունչը թարգմանվել է հունարենից Սահակ Պարթև կաթողիկոսի ձեռքով 420-ական թվերին և վերջնական խմբագրման ենթարկվել նզնիկ Կողբացու մասնակցությամբ Եփեսոսի ժողովից հետո՝ 432-435 թթ.:

14 Septuaginta, Tobias, p. 1005.

15 Գիրք Աստուածաշունչը Հին և Նոր կտակարանաց. Վենետիկ, 1860, էջ 486:

(ԺԹ, 37) սույն ղրվագում հունարեն և հայերեն թարգմանությունները հետևել են եբրայերեն բնագրին և անփոփոխ սլահել Արարատ երկրանունը՝ αὐτοὶ ἐσωῶθησαν εἰς γῆν Ἀραράτ¹⁶ («ինքեանք զերծան յերկիրն Արարադայ»), սակայն լատիներեն Vulgata-ն կասկած չի թույնում, որ այստեղ ևս խոսքը Հայաստանին է վերաբերում՝ «in terram Armeniorum» ([փախան] Հայոց երկիրը): Սրան ճիշտ հակառակ, Սենեքերիմի սպանություն հաջորդ վկայություն մեջ (Ես. ԼԷ, 38) թե՛ հունարեն և թե՛ հայերեն թարգմանությունները եբր. Արարատ երկրանվան դիմաց ունեն Հայաստան – Sept.: αὐτοὶ δὲ διεσωῶθησαν εἰς Ἀρμενίαν (p. 616-617), «եւ ինքեանք զնացին փախստական ի Հայս»: Մինչդեռ Vulgata-ն այստեղ հետևել է եբրայերեն բնագրին՝ «in terram Ararath» (դեպի Արարատ երկիրը), որի առթիվ զբաժ մեկնություն մեջ Հիերոնիմոսն Արարատ անվերապահ ընդունում է իբրև Հայաստան, ինչպես ավելի մանրամասն կտեսնենք ստորև:

Նույն ղրվագի երրորդ վկայություն մեջ վերն արդեն հիշված Tobias (Տովբիթ) գրքի հունարեն բնագրում կարդում ենք, որ երկու հայրասպան որդիները փախան Արարատ լեռները՝ «ἐνυχοφ εἰς τὰ ὄρη Ἀραράτ» (Tob. 1, 21), որը հայը թարգմանել է «Եւ ոչ անցին աւուրք յիսուն՝ մինչև սպանին ղնա (ղՍենեքերիմ) երկոքին որդիքն իւր, եւ փախեան նոքա ի լերինս Հայոց» (Տովբիթ, Ա, 24):

Յուրովի է պատմում Հովսեպոս Փլավիոսը Սենեքերիմի սպանություն և նրա որդիների փախուստի ղրվագը՝ «Սենեքեյրիմը Եդիպտոսի դեմ մղած պատերազմից Երուսաղեմ վերադառնալով Հասավ այն ժամանակ, երբ զորավար Հրափսակեսի (հրամանատարություն) տակ եկող զորքը ժանտախտի արհավիրքի առաջ էր գտնվում: <...> Այս աղետի պատճառով նա ընկավ մեծ երկյուղի և տազնապի մեջ, ու վախենալով իր ամբողջ բանակի համար, զորքի մնացած մասով հեռանում է իր թագավորությունը, որը կոչվել է Նինոսի անունով: Եվ այնտեղ կարճ ժամանակ մնալուց հետո դավադրաբար սպանվում է իր ավագ որդիներ Անդրոմաքոսի և Սելեկարոսի կողմից ու վախճանվում, և նրա (դիակը) ղրվեց իր իսկ սեփական տաճարում, որը կոչվում էր Արասկես: Իրենց քաղաքացիների կողմից Հայրասպանություն համար երկրից վտարվածները հեռանալով, Հասան Հայաստան, մինչդեռ թագավորությունը ժառանգեց Սենեքեյրիմի որդիների իրավունքները ստնահարած Ասարախոգասը»¹⁷: «Հրեական հնախոսություն»-ից բերված այս հատվածում, երկու հայրասպան որդիները, որոնց անունները տարբեր են Աստվածաշնչից, դարձյալ ապաստան են դանում Հայաստանում:

Մովսես Խորենացին ևս, հաստատելով Հին կտակարանի հաղորդումը Սենեքերիմի որդիների Հայաստան փախչելու մասին, վկայում է «... զոր սպանեալ որդւոց նորա Ազրամելեքայ և Սանասարայ եկին փախստական առ մեզ», և շարունակելով այդ ղրվագը, պատմում է, թե նրանցից մեկին՝ Սանասարին, մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է մեր աշխարհի հարավ-արևմուտքում, հենց նույն Ասորեստանի սահմանի մոտ, Սիմ լե-

16 Septuaginta, p. 739.

17 Հ ո Վ ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս. Դիոն Կասիոս. Թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 57:

ուան ստորոտում, որից և առաջ եկավ Աղձնյաց բղեչխությունը, իսկ Արդամողանին (Աղբամենիքին)՝ նույն կողմի հարավ-արեելքում, որից և առաջացան Արծրունի և Գնունի տոհմերը¹⁸:

Այսպիսով, Հին կտակարանի երեք հնագույն դասական թարգմանությունները, այդ թվում հունարեն Septuaginta-ն, իր պատկառելի հնությամբ (մ.թ.ա. III դար), անհերքելի հաստատում են, որ Հին կտակարանի առնվազն չորս վկայություններում հիշատակված Արարատ երկիրը բուն Հայաստանն է՝ Ուրարտուն: Միայն Երեմիայի մարգարեության (ՄԱ, 27) վկայության մեջ հիշյալ երեք թարգմանությունները հարադատ են մնացել եբրայերեն բնաղբին և «Այրարատեան թագաւորութեանցն» թողել են անփոփոխ: Բայց այստեղ էլ մեզ օգնության է գալիս V դարի մեր պատմահայր Մովսես Խորենացին, որը «Այրարատեան թագաւորութիւն» ասելով հասկանում է Հայոց թագավորությունը: Նա գրում է այս առթիվ «Եւ զի արդարեւ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ և Երեմիա մարգարէ ի բանս իւր. հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին: Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»¹⁹:

Ուրարաու-Արարատ երկիրը հրեա մեծ մարգարեներ Եսայիի²⁰ և Երեմիայի²¹ ժամանակակիցը իր հզորության շրջանում զսպում էր Ասորեստանի և Բաբելոնի գավթողական նկրտումները: Ասորեստանի և Բաբելոնի արքաները խեղդում էին արյան մեջ հրեա ժողովրդին, կողոպտում ու կործանում Երուսաղեմը, գերեվարում հրեաներին: Ուստի հրեա մարգարեների հույսը մնում էր հյուսիսային երկիրը՝ Արարատը, որը սաստելու էր ասորա-բաբելական ամբարտավան արքաներին: Ահա, թե ինչու Երեմիա մարգարեն գոչում է. «Իող հարէք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցեք ի վերայ Վորա [Բաբելոնի] գունդս: Պատուէր տուք յինէն այրարատեան թագաւորութեանցն եւ ասքանազեան գնդին» (Երեմ. ՄԱ, 27): Այրարատյան թագավորությունը հենց Ուրարտու երկիրն է, որի արքաներն իրենց արձանագրություններում պարծենում էին ոչ թե ժողովուրդներ կոտորելու և կողոպտելու, գանգերի բուրգեր կանգնեցնելու անհագուրդ մարմաջով, այլ իրենց կառուցած քաղաքներով ու ջրանցքներով:

Հակառակ մերօրյա որոշ Հայ ուրարտագետների, որոնք Ուրարտու երկիրը և նրա ժողովրդին տարանջատում են Հայաստանից ու Հայ ժողովրդից, Բեռլինի «Ֆրիդրիխ Վիլհելմ» Համալսարանի ուսուցչապետ, գերմանացի իրանագետ և պատմական աշխարհագրության հմուտ հետազոտող Էռնստ Հերցֆելդը 1934 թ. Բրիտանական ակադեմիայում կարդացած դասախոսություններում հայտարարում էր. «Ուրարտու-Հայաստանի պատմությունը և հնագիտությունը գնալով ավելի հստակ են ուրվագծվում՝ արձանագրությունները վերծանելու առաջադիմությանը զուգընթաց,

18 Մ ո վ ս ի ս ի՝ Խ ո Ր Ե Ն ա ց Լ ո յ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Թարութիւնեան, Տփղիս, 1913, գիրք Ա, գլ. ԻԳ (ԻԴ), էջ 70.

19 Խ ո Ր Ե Ն ա ց ի. ԻԲ (ԻԳ), էջ 67:

20 Մարգարե էր Երուսաղեմում 759-709 թթ. մ.թ.ա.:

21 Մարգարե էր ըստ ավանդության մ.թ.ա. 628-586 թթ.:

չնայած որ երկիրն այլևս գոյութուն չունի: 'Իա բիրլիական Արարատ երկիրն է»²² (ընդգծումը մերն է – Ա. Մ.):

ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆԸ ՀԱՆԳՐՎԱՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այն, որ Նոյան տապանը հանգրվանել է Հայաստանում, միաբերան վկայում են նաև նախաքրիստոնեական մի շարք հեղինակներ՝ Բերուսոս Քաղղեացին (330–250 մ.թ.ա.), հույն պատմագիր Ալեքսանդր Բաղմավեպը (ծնվ. մ.թ.ա. մոտ 105 թ., մահ. մ.թ.ա. 49 թ. հետո), Նիկողայոս Դամասկացին (մ.թ.ա. I դ.), Հովսեպոս Փլավիոսը (մ.թ. I դ.), Աբյուղենոսը (մ.թ. II դ.) և ուրիշներ, չխոսելով արդեն հույն և լատին քրիստոնյա մատենագիրների մասին: Տարակարծությունները ծագել են հիմնականում այն հարցի շուրջ, թե Հայաստանի ո՞ր լեռներում է իջել Նոյան տապանը կամ Քսիսուլթրոսի նավը:

Ջրհեղեղի աքաղական առասպելում փրկարար նավն իջնում է Նիսիր (Փրկութուն) լեռան վրա, որի գտնվելու վայրի մասին հստակ տեղեկություն չեն տալիս ո՛չ Ասորեստանի թագավոր Ասուրնասիրսյալ II-ի (մ.թ.ա. IX դ.) սեպագիր արձանագրությունը, ոչ էլ Գիլգամեշի էպոսում պահպանված ջրհեղեղի պատմությունը: Ուստի առասպելական լեռան տեղադրման մասին մեր պատկերացումները կախված են հին աշխարհի պատմության և պատմական աշխարհագրության մասնագետների ավելի կամ պակաս հիմնավոր կռահումներից: Ոմանք էլ կարծում են, թե աքաղական Նոյի՝ Ութ-նապիշտիմի նավը կանգ է առել Գիլգամեշ էպոսում հիշված Մաշու լեռան վրա, և վերջինս նույնացնում են Մասիսի հետ:

Մ.թ.ա. III դ. առաջին կեսին, երբ Ալեքսանդրիայում (եգիպտոս) Պտղոմեոս Եղբայրասեր թագավորի (285–247 թթ.) հրամանով հունարեն էր թարգմանվում Մովսեսի Հնգամատյանը՝ եբրայական կտակարանի մյուս կանոնական գրքերի հետ միասին, այդ նույն ժամանակ Սելևկիայի թագավոր Անտիոքոս I Սոտերի օրոք (281–261 թթ.) Բաբելոնում Բելի տաճարի քրմապետ Բերոսոսը շարադրում էր իր եռամասն «Քաղղեական պատմությունը» և այստեղ էլ անդրադարձել է Ջրհեղեղի քաղղեական ավանդությունը, ըստ որի քաղղեական Նոյի Քսիսուլթրոսի նավը Ջրհեղեղի նվաղման ժամանակ իջնում է Հայաստանի Կորդվաց լեռներում: Փաստորեն Բերոսոսն առաջինն է, որ եբրայական Արարատն անվանում է Հայաստան և, հակառակ հունարեն «Յոթանասնից» թարգմանության, Քսիսուլթրոսի նավն իջեցնում է Կորդվաց լեռներում, այլ ոչ թե Արարատ լեռներում:

Այս ավանդությունից գրեթե նույնանման հատակտորներ են մնացել Հովսեպոս Փլավիոսի և Եվսեբիոս Կեսարացու պատմական երկերում այլ հեղինակների փոխանցմամբ: Հովսեպոսը «Հրեական Հնախոսության» մեջ՝ գրված հունարեն մ.թ.ա. I դ. վերջին, 94–95 թթ., նշելով, ըստ եբրայական Ծննդոց գրքի, որ Նոքոսի տապանը կանգ է առել Հայաստանում՝ ինչ-որ

22 Archaeological History of Iran by Ernst Herzfeld, D. Phil. Professor ord. of the Friedrich-Wilhelmuniversity of Berlin. The Schweich lectures of the British Academy 1934, London, 1935. p. 11.

լեռան գագաթին, անմիջապես էլ բերում է Ջրհեղեղի մասին Բերոսոսի թողած քաղաքական ավանդույթունը²³, որտեղ և հիշված է լեռան անունը՝ «Այս Ջրհեղեղի և տապանի մասին հիշատակում են բոլոր նրանք, որոնք գրել են բարբարոսների պատմությունները. նրանցից է Բերոսոս Գաղղեսացին, որը պատմելով Ջրհեղեղի ժամանակ տեղի ունեցած զեպտերի մասին, այսպիսի բաներ է գրում. «Ասում է, թե մինչև հիմա էլ նախ մի մասը գանվում է Հայաստանում, Կորգվաց լեռների մոտ, և որ սմանք (նրա վրայից) ստեղծելով կուպրի կայրներ են բերում. մարդիկ դրանք կրում են իրենց վրա իրեն հոստովք» (գիրք առաջին, 93)²⁴: Բերոսոսի հաղորդած Ջրհեղեղի քաղաքական ավանդույթյան մասին համանման սեպեկություն է տալիս նաև Ալեքսանդր Բաղմավեղը, որի պատմությունից հաստատվում են պահպանվել եմպիրոս Կեսարացու Քրոնիկոնում: Ահա մեզ հետաքրքրող հատվածը V գ. հայ մատենագրի թարգմանությունը. «տեղին յորում վայրի ելեալ կային. Հայոց աշխարհն է: <...> Եւ ի նաւեն ուր (կամ որ) չողաւ դադարեաց ի Հայս, և ցայժմ ստեղծ ինչ մասն ի Կորգուտցոց լերինն ի Հայոց աշխարհին մնայ նշխար ստեն. և սմանց քերել բերել ի ծեփածոյ նստին նաթոյ ի բժշկութիւն և ի ջնջոց ցաւոց ինչ բժժանաց»²⁵:

Թեև Արշակունիսը Բաղմավեղի նման վերապատմում է Բերոսոսի հաղորդած ավանդույթունը՝ Քրոնիկոսի կամ Միսիթրոսի նավը անձրևների նվազման ժամանակ զեպի Հայաստան նավարկելու մասին, բայց, հակառակ Բաղմավեղի, չի հիշատակում Կորգվաց լեռները. «Մինչդեռ առաջատու ձգեալ նաւարկել ի Հայս կամէին, յանկարծակի հասանէին նաւափարքն յԱստուծոյ», «Եւ անդէն վաղվաղակի դէքն զնա (զՄիսիթրոս) ի մարդկանէ հետակորոյս առնէին. և նաւն երթեալ յաշխարհն Հայոց դադարէր և ի փայտիցն դեղ օգնականութեան բնակչաց աշխարհին պարսէէր»²⁶:

Նիկողայոս Դամասկացին (ապրել է մ.թ.ա. 37–4 թթ. Հերովլեոս Մեծի պալատում) 144 դրբից բաղկացած իր ընդհանրական պատմության 96-րդ գրքում տաղանի հանդրվան է համարում Հայաստանում դանդաղ Բարիս մեծ լեռը. «Մինիստ [երկրից] վերև Հայաստանում կա մի խոշոր լեռ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերը ապաստանելով փրկություն են գտել Ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը տապանի վրա տարվելով, իջել է գագաթին, և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են: Սա հավանաբար այն մարդն է, որի մասին գրել է Մոյսեսը, հրեաների օրինագիրը»²⁷, – այս հատվածը պահպանվել է Հովսեփոս Գլավիոսի «Հրեական հնախոսություն» գրքում:

23 Բերոսոսի այս հաղորդման հիման վրա էլ վերահիշյալ պրոֆ. Հերցֆելդը վերկարար նիսիք լեռը, որ տեղական զամուս ցեղի լեզվով կոչում էր նաև Կինիպա, տեղադրում է Կորգվաց գագաթում (E r n s t H e r z f e l d. The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East. Wiesbaden, 1968, pp. 201, 203):

24 Հ ո Վ ս Կ ո ս Փ լ ա Վ ի ո ս. Դիոն Կասիոս, էջ 55:

25 Լեոսերի Պամփիլիայ Կեսարացու ժամանակակից Երկմաննեայ, թարգմ. ի լատին բարբառ. աշխ. հ. Մկրտիչ վարդապետի Միսիթրոսեան Աւգերեանց. մասն Ա. ի Վենետիկ. 1818, էջ 36–37:

26 Նույն տեղում, էջ 49–50:

27 Հ ո Վ ս Կ ո ս Փ լ ա Վ ի ո ս. Դիոն Կասիոս, էջ 55: Բարիս և Մասիս լեռնանունների փոխարկման մասին հետաքրքիր վարկած է առաջարկում Արտակ Մովսիսյանը (Սրբազան լուսաշխարհը, Երևան, 2000, էջ 50–52) կասկած սեպագրերում «բար» և

Յննդոց գրքի եթովպերեն մի յուրօրինակ չարագրանքում, որ բունասիրությամբ հայտնի է «Հորեյլանների կամ փոքր Յննդոց գիրք» անունով և գրված պետք է լինի Պաղեստինում մ.թ. 1 դ. Հին երբայական ավանդության հիման վրա, ստույունի մասին ստված է (դր. V): «Եւ նա գնաց և նստեց Արարատի լեռներից մեկի՝ Լուբարի գագաթին»²⁸:

Այս Լուբար լեռը հիշատակում է նաև եպիփան Կիպրացին (~404) «Ընդգեմ հերձվածոց» գրքում²⁹:

ԱՐԱՐԱՏ-ԿԱՐԴՈՒ ԿԵՂԾԻՔԸ ԵՎ ԴՐԱՒԱՅՆԱԳՐՈՒՄԸ

Ինչպես այժմ, այնպես էլ վաղ ժամանակներում և հատկապես երբայերեն կապարանը գանաղան լեզուներով թարգմանելու շրջանում, տարբեր ազգությունների պատկանող գիտունների ու մտածողների, իսկ քրիստոնեությունից շրջանում՝ հոգևոր հայրերի ու եկեղեցական մասնագետների միջև բուռն վեճեր էին բարդվում պատմական և կրոնատվական նշանավոր իրադարձություններն ազգայնացնելու, այս կամ այն ժողովրդին վերագրելու միտումով: Այնպես որ ազգայնացման և անհիմն յուրացման այս միտումը հինավուրց երևույթ է և ամենևին հատուկ չէ միայն մեր օրերին, երբ որևէ ազգի վերագրված և համրեհանուր ճանաչում գտած պատվը փորձում էին խղել և վերագրել սեփական կամ մի այլ ազգի ու երկրի: Օրինակ, վաղուց հայտնի ավանդություն է, որ աստվածային գրախար գտնվում էր Հայաստանում՝ Եղեմ կոչվող գավառում, հայոց չորս մեծ գետերի հոսանքում, որոնք են՝ Փրսոն (Փասիս կամ Աղյուս), Գեհոն

«մաս» մասնիկների շփոթման հետ: Եթե այս վարկածը ճիշտ է, ապա տասնամյակի լուր ավելի ստույգ որոշելու համար անհրաժեշտ է մատնանշել ևս մի լրացուցիչ աշխարհագրական փաստարկ, քանի որ ենթադրվող Բարիս լեռը ոչ միայն «Ալտա» կամ «Ավալ» Մասիս կարող է համարվել, այլ այն որոնել են նաև Բզնունյաց (Վանա) ծովի շրջակայքում: Բարիս լեռը կարող է նույնացվել Փալատոս Բուզանդի մոտ հիշատակվող Ապահունյաց երկրը (գավառ) Մասիս մեծ լեռան հետ (Պատմութիւն Հայոց, Գ. Բ. Երևան, 1987, էջ 83), որ Նիս-Մասիքն է կամ Սրիանը՝ Բզնունյաց ծովից հյուսիս-արևմուտք, և որանով կարգարանա Յ. Մարկիվարի ենթադրությունը Բարիս-Սրիան (Նիս-Մասիք) նույնացնում վերաբերյալ: Ընդգծին, Մինուսաս տեղանքը Մարկիվարը չի կապում Մին(ն)ի երկրի հետ, այլ որպես «Մինուսասի (Մենուսայի) քաղաք» նույնացնում է Մանավաղակերտի (Մանաղկերտ) հետ, որը մտնում էր Հարթ գավառի մեջ (և ո ռ ե ն ա յ ի Ա. ԺԲ, էջ 39), իսկ նրանից վերև՝ Ապահունիք գավառում բարձրանում էր Սրիանը (Նիս-Մասիք կամ Մասիս), որը հայտնի էր իբրև սափանի լեռ (J. M a r k w a r t. Sudarmenien und die Tigrisquellen. Wien, 1930. S. 15-16): Բացի այդ՝ Բարիս լեռը կարող է նույնացվել Բզնունյաց ծովից հարավ ենթադրվող Մաշու լեռնազանգվածի հետ, որի տակով անցնող գետնուղին հաղթահարելով ըստ առասպելի, Գիլգամեշը հայտնվում է զրախտի պարտեղում և հանդիպում անամահության արժանացած Ութ-Նապիշտիմին և նրա կնոջը: Հենց այս պատճառով էլ պետք է կարծել, թե Նիսի լեռը, որի վրա կանգ էր առել Ութ-Նապիշտիմի նավը, նույն Մաշու լեռնազանգվածի գագաթն է: Ինչպես նշում է Լեման-Հառուպը, Գիլգամեշի էպոսում նկարագրված «Մաշու (Մասիուս) լեռան մթին թուռները պետք է որոնել ավելի շուտ ոչ թե հեթիաթների աշխարհում, այլ այն եղել է և է՝ Հայաստանում առկա լիրգություն»։ Ընդ որում՝ երախտաշաա հնագետը առասպելական Մաշուի թուռները նույնացնում է Հայկական Տավրոսի (Վասպուրականից հարավ) միջով անցնող այն ստորերկրյա հունի հետ, որով հոսել է Արևելյան Տիգրիսի (Բահաման-սու) գլխավոր հոսանքը («Հանդիս Ամսորեայ», Վիեննա, 1927, № 11-12, էջ 795 և հաջ.):

28 A. D i l m a n n. Das Buch der Jubilaea oder die Kleine Genesis, aus dem Aethiopischen uebersetzt. Jahrbücher der Biblischen Wissenschaft von N. Ewald. Bd. II. 1849, Göttingen 1850. S. 243. տե՛ս նաև՝ F. M u r a d. Ararat und Masis. Studien zur armenischen Altertumskunde und Literatur. Heidelberg, 1901. S. 24.

29 Epiphani Opera, ed. G. Dindorfius, vol. I, Lipsiae, 1859, p. 283.

(Երասխ), Տիգրիս (Դգդաթ) և Եփրատ (Արածանի): Այս ավանդույթները հենվում է հրաշական (Հին) Կտակարանի Ծննդոց գրքի հետևյալ վկայությունների վրա. «Եւ գեաւ ելանէր յԵփեմայ ոռոգանել զգրախտն. Եւ անտիրաժանի ի չորս առաջս: Անուն միումն Փխովն. նա է որ սլատէ զամենայն երկիրն Եփրատայ, անդ ուր սակին է, և սակի երկրին այնորիկ աղնիւ. և անդ է սուտակն եւ ակն դահանակ: Եւ անուն գետոյն երկրորդի Գեհովն, նա սլատէ զամենայն երկիրն Եփրատայ: Եւ գետն երրորդ՝ Տիգրիս, նա է որ երթայ յանդիման Ասորեստանի: Եւ գետն չորրորդ՝ Եփրատէս» (Ծննդ. Բ, 10–14):

Եվ ահա, մեր թվարկության սահմանադրված փլուծն երբայցի (Աղեքսանդրացի) նշանավոր աստվածաբանը, որին Ֆր. Էնգելսն անվանում էր «քրիստոնեությունից հայր», գրախտի սլատիվը Հայաստանից խլելու համար այսպես էր հիմնավորում իր վատ քողարկված հակահայ միտումը. «Մ է գետն որ յագենայ (Եփեմից – Ա. Մ.) ելանէր. յորմէ գրախտն ոռոգանի. և չորք սլատառին գետք. Փխովն, և Գեհոն, և Տիգրիս, և Եփրատէս: Ասին Դգդաթայ և Արածանույ (Տիգրիսի և Եփրատի – Ա. Մ.) աղբիւրքն բլխել ի Հայոց լեռանցն. և անդ գրախտ ոչ է, այլ և ոչ երկուք ևս այլ աղբիւրք գետոց: Արդ մի՛ գուցէ թէ գրախտն հեռի ուրեք ի մերմէ ընակուածն է աշխարհիս է. և գետ ունի հոսելով ընդ երկրաւ, որ բազումս և մեծամեծս ոռոգանէ երակս: Ջի նոքա յառնելով առաքեսցեն, յայլ ընդունիչ երակս ընդարձակ լինելով. և սոքա յորձանօք ալեացն ճնշեալք, այն որ ի ներքս ի նոսա բռնուծիւնն է, ի վեր կոյս բերանացանէ, է՛ որ ի Հայոց լեռինսն, և է՛ որ յայլում: Եւ սորա են կարծեցեալ աղբիւրքն, գետոցն հոսմունք՝ առաւել, կամ աղբերք յիրաւի կարծեցեալք վասն յամենայնին անսուտ գոլ աստուածային գրոց, յորս զեկուցեալ լինին չորից գետոցն իրք. զի սկիզբն է գետ, այլ ոչ աղբիւր»³⁰: Բանի որ Ծննդոց գրքում հիշված են միայն չորս գետերի անունները, բայց երկրի անունը չի նշված, ուստի Փիլոնը իր մեկնությունամբ փորձում է հերքել երաշական Կտակարանի հիման վրա հաստատված և իր ժամանակ, ըստ երևույթին, լայն տարածում գտած կարծիքը, որ գրախտը գանվում է Հայոց երկրի տարածքում, և գա անում է այն պատճառաբանությունամբ, թե Հայոց լեռներից ըստման են միայն Տիգրիսի և Եփրատի աղբյուրները, բայց ոչ մյուս երկու գետերինը. բացի այդ, Ծննդոց գրքում չորս գետերը (առաջս – եբր. *ras*) սկիզբ են առնում մեկ գետից (եբր. *nahar*), այլ ոչ թե աղբյուրից՝ «զի սկիզբն է գետ, այլ ոչ աղբիւր», և, ուրեմն, «անդ գրախտ ոչ է»: Ուստի Փիլոնը «չորս գետերը» հասկանում է փոխաբերաբար իբրև մարգկային բնության չորս հատկություններ յայլաբանություն (խոհեմություն, ջանասիրություն, բարկություն և արդարություն): Այսօր արդեն իմաստ չունի, թեկուզ և ձևական տրամաբանություն առումով, հերքել Փիլոնի փաստարկները: Նշենք միայն, որ նման միտումով Փիլոնը միայն հասնում է հակառակ արդյունքի՝ մեզ գրավոր հիշատակ թողնելով այն մասին, որ մեր թվարկության սահմանադրված գոյություն է ունեցել և մինչև Ալեքսանդրիա տարածված եղել մի գեղեցիկ ավանդություն, թե գրախտը գտնվել է Հայոց երկրում.

³⁰ Փիլոնի երբայցևոյ Մնացորդք ի Հայս որ են Մեկնութիւն ծննդոց եւ Ելից. ճառք ի Սամիսն, ի Յովնան, և յերիս մանկունս, կամ ի հրեշտակս. Վենետիկ, 1826 (ԺԲ), էջ 9:

ի՛նչ կարևոր է, թե Փիլոնը համաձայն չէ դրա հետ – շատ մեծ բան: Այսպես էլ հայոց Աշխարհացույցը, ընդգծելով Մեծ Հայքի առաջին աշխարհի Բարձր Հայքի դիրքը մատնանշում է, թե ուրիշներն այն կոչեցին «Կատար երկրի», քանզի աշխարհի չորս կողմի վրա արձակում է չորս հզոր գետ՝ Եփրատ, Երասխ, Գայլ և Վոհ. «Եւ բարձր ոչ միայն քան ղ Հայք, այլ և քան զամենայն երկիր. Լասն որոյ Կատար երկրի կոչեցին զնա, զի ի չորս գետս զօրեղս, զԵփրատ՝ յարևմուտս, և ղՅերասխ յարևելս, զԳայլ ի հարաւ, զԱկամսիս որ է Վոհ ի հիւսիս»³¹:

Հայաստանի դեմ ուղղված հաջորդ ուշագրավ փոստար կասկած է երբայական Կտակարանը միտումնավոր աղավաղելու անսքող փորձի հետ: Եբրայերեն Կտակարանի «Յոթանասնից կոչված հունարեն թարգմանությունից հետո (մ.թ.ա. III դ.) ժամանակագրական կարգով երկրորդ կարևոր թարգմանությունը արամեերեն թարգման է, որը մ.թ. մոտ 70 թ. Հռոմի կայսր Ադրիանոսի հրամանով Երուսաղեմը կործանելուց և եբրայերենն արգելելուց հետո, Եդեսիայի և Միջագետքի մյուս հրեական համայնքներում II դ. փոխարինելու եկավ եբրայերեն Կտակարանին և ձեռք բերեց շուտով նույնպիսի Սուրբ Գրքի արժեք: Սակայն ի տարբերություն եբրայերեն բնագրի, մեր ձեռքը հասած արամեերեն թարգման ունի որոշ շեղումներ. այսպես, Նոյի ասպանը ջրհեղեղի դրվագում թարգմանի Ծննդոց գրքում կանգ է առնում ոչ թե Արարատի լեռներում (եբր.՝ al harey Ararat), ինչպես վկայում է եբրայերեն բնագիրը, այլ Կարգու լեռներում (արամ.՝ al turey Kardu): Նույն կերպ Դ Թագավորաց (19,37) և Եսայիի մարգարեության (37,38) գրքերում Սենեքերիմի որդիները իրենց հորը սպանելուց հետո փախչում են ոչ թե Արարատի երկիրը, ինչպես եբրայերեն բնագրում է, այլ Կարգու երկիրը (Atra Kardu): Սա ոչ թե սոսկ բանասիրության, այլ պատմական աշխարհագրության համար կարևոր խնդիր է, որի վրա թեև վաղուց ուշադրություն են դարձրել ականավոր ուսումնասիրողներ, այսուհանդերձ առաջարկվող լուծումները հեռու են բավարար լինելուց:

Քեռես 1947 թ. հայտնաբերված կումրանյան ձեռագրերում հնագետները նկատեցին, որ եբրայական Կտակարանի Եսայիի մարգարեության մեջ (մ.թ.ա. II–I դդ.) հակառակ արամեերեն թարգմանի, պահպանվել է եբրայական բնագրի Արարատ (hwratt) երկրանունը³²: 1963 թ. Փարիզում լույս տեսավ «Կումրանի տեքստեր» գիրքը³³, որի մեջ հեղինակներից մեկը՝ Լինյեն, հրապարակել էր արամեերեն պարականոն Ծննդոց գրքի մի հատված իր վերծանությամբ և թարգմանությամբ: Այս դրքի վրա առաջինը մեղանում ուշադրություն դարձրեց ականավոր հայագետ, բանասիրության դոկտոր Գևորգ Աբգարյանը «Արարատը Կումրանի ձեռագրերում» հոդվածով, որը մինչև այժմ անտիպ է: Նորահայտ արամեերեն պարականոն բնագրի 10-րդ սյունյակի 12-րդ տողում նշված է, որ ջրհեղեղից հետո տասանը «նստում է Արարատի լեռներից մեկի վրա»: Այս առթիվ Գ. Աբգարյանը արժեքավոր դիտարկումներ է անում հիշյալ անտիպ հոդվածում. «Ա-

³¹ Աշխարհացոյց Մովսիսի Խորենացու, Հրատ. Սուքրի. Վենետիկ, 1881, էջ 29–30:

³² Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 33.

³³ J. C a r m i g n a k. É. C h o t h e n e t e t H. L j g n e e. Les textes de Qumran. Paris. 1963, II, pp. 205-242.

ուսջին հայայքից կտրույ է թվալ, թե այստեղ կրկնված է Աստվածաշնչի երբայերևն բնագրից հայտնի Արարատի անունը: Ասկայն ձեռագրում արամեերեն Աստվածաշնչից քաղված բառացի արտագրությունները դուրս են ապրիս, որ քաղվածքների աղբյուրը ոչ թե երբայերևն, այլ արամեերեն Աստվածաշնչն է: Իսկ սա նշանակում է, որ Արարատի անունը նույնպես քաղված է արամեերեն Աստվածաշնչից: Այս դեպքում մնում է ընդունել, որ այդ Աստվածաշնչի սկզբնական տեքստում հիշատակված է եղել Արարատը: Քարգուլի ներմուծումը պարունակող արամեերեն Աստվածաշնչի այսօր մեկ հայտնի տեքստն անհամեմատ ավելի նոր է, քան Կուժրանի ձեռագիրը, որում ներմուծումը դեռ չի կատարված, և Նոյի աստվան իջնում է Արարատյան լեռներում: Այսպիսով, Կուժրանի ձեռագրի շնորհիվ Արարատը վերստանում է իր կորցրած տեղը երբայերենից թարգմանված արամեերեն Աստվածաշնչում»:

Կուժրանյան պարականոն Օննդոց գրքի և վերը հիշված Եսայի մարգարեության արամեերեն բնագիրը գալիս է հաստատուի, որ երբայերեն կառուցման արամեերեն նախնական թարգմանություն՝ Թարգումի մեջ անխաթար առկա է եղել Արարատ անունը: Նշանակում է, երբայերեն կառուցման արամեերեն թարգմանողները հարավատ են մնացել սկզբնագրերին: Եվ սա, ավելացնենք, վերաբերում է նաև Թարգումի մյուս գրքերին, որտեղ այժմյան «Կարգու երկիր» արտահայտությունը փոխարեն թարգմանություն սկզբնագրում պետք է եղած լիներ «Արարատի երկիր»:

Ինչպե՞ս է կատարվել այդ փոփոխությունը: Մ.թ. II դ. կեսերին, երբ Միջագետքի և հատկապես Եգիպտոսի հրեական համայնքներում աղղեցիկ գիրք գրավեցին ասորի քրիստոնյաներն ու նրանց մեկնիչները, նրանք հանկարծ հիշեցին, որ քաղղեացի Բերոսոսի հաղորդած Ջրհեղեղի ավանդություն մեջ, որ բերում է հրեա պատմագիր Հովսեպոս Փլավիոսը, Նոքոսի (Նոյի) տապանը կանգ է առել Հայաստանի Կորգվաց լեռներում³⁴: Վերականգանայնելով քաղղեական ավանդությունը, ասորի մեկնիչները արամեերեն թարգումի մեջ թույլ տվեցին մի շարք միտումնավոր նորամուծություններ, որոնք զգալի չափով շեղվում էին եբրայական բնագրից և ուղղված էին հիմնականում շին կառուցման «Յոթանասնից» հունարեն թարգմանության դեմ, որը Եսայի մարգարեության մեջ եբրայական Արարատը նույնացնում էր Հայաստանի հետ: Նախ, միտումնավոր լուծված տալով, որ Կորգվաց դավառը ըստ Բերոսոսի մտնում էր Հայաստանի մեջ, նրանք, հակառակ եբրայերեն բնագրի և հունարեն թարգմանության, արամեերեն թարգումի Ջրհեղեղի գրվագում ջնջեցին Արարատ անունը և տեղը մուծեցին Կարգու: Այս նորամուծությամբ էլ լսմբագրված թարգումում Նոյի տապանը հանդրվանում է ոչ թե Արարատի լեռներում («ի լեռինս Արարատայ»), այլ Կարգու լեռան վրա, ինչպես Բախտեթրոսի նավը Բերոսոսի քաղղեական ավանդության մեջ:

Ըստ այսմ, մեր ձեռքը հասած արամեերեն թարգումում Ջրհեղեղի գրվագում միտումնավոր միախառնված են երկու տարբեր ավանդություն՝

³⁴ Josephus Flavius. 'Ιουδαϊκή Ἀρχαιολογία. Flavii Josephi Opera. 7 voll. Berolini, 1887. Vol. I. 90(I, III, 5-6).

եբրայական և քաղաքական, սրոնք երկու սարքեր դարաշրջանների, մշակույթների և աշխարհագրական միջավայրերի արգասիք են, ըստ որում քաղաքականը շուրջ 1200 տարով ավելի կրասեր է եբրայական Մենդոց գրքից: Ըստ ավանդության, հրեաների մեծ մարդարի Մովսեսը (ծնվել է մ.թ.ա. 1571-ին և ապրել 120 տարի) իր Հնգամատյանը՝ Մենդոց դրքով հանդերձ թելադրել է ութսունն անց տարիքում, ուրեմն 1491–1451 թթ. ժամանակահատվածում, իսկ քաղաքացի Բերոտոս քուրմն իր «Բուբելոնականք» կամ «Քաղաքականք» եռամասն պատմությունը գրել է մ.թ.ա. III դ. առաջին կեսին սելևկյան թագավոր Անտիոքոս Սոտերի օրոք (281–261):

Ասորի մեկնիչները չգոհացան միայն ջրհեղեղի ավանդությունը եղծելով, այլ Թարգումի մյուս դրքերում՝ Ջրհեղեղի հետ առհասարակ չառնչվող երկու այլ դրվագներում ևս՝ II Թագ. 19,37 և ես. 37,38, Արարատ երկրի փոխարեն մուծեցին Կարդու (Կորդուք) երկիրը: Այսկերպ Արարատ-Ուրարտու-Հայաստան երկրի փոխարեն արամեերեն Թարգումի մեջ անդ զտաով Հայաստանի հարավարևելյան ծայրագավառ Կորդուքը³⁵, որով լուրջ տրվեց աշխարհագրական բացահայտ կեղծիք: Ավելին, Երեմիա մարգարեի հայտնի վկայություն մեջ (51,27), որ եբրայերեն բնագրում ունի «Կոչեցէք ի վերայ դորա [Բաբելոնի] զթագաւորութիւնս Արարատայ, Մինևոյ եւ Ասքանաղայ»³⁶, Թարգումի խմբագիրները, Արարատի թափափուրության տակ դարձյալ հասկանալով Կորդուքը, Արարատ-Հայաստան նույնացումը ժխտելու համար Minni երկրանունը փոխեցին Armeni, այն է՝ Հայաստան, փորձելով Հայաստանն ու հայերին դուրս դնել աստվածաշնչական Արարատ երկրից:

Ավելի ուշ, երբ քրիստոնյա ասորիները Հին կտակարանը թարգմանում էին ասորերեն, Պեշիտոտո («պարզ») կոչված այդ թարգմանություն մեջ ևս, արամեերեն Թարգումի օրինակով³⁷, Մենդոց դրքում (8,4) և Եսայիի մարգարեություն մեջ (37,38) Արարատ անվան փոխարեն մուծեցին Կարդու: Իսկ II Թագաւորութեանց³⁸ 19, 38-ում և Երեմիայի մարգարեություն 51, 27-ում թեև Արարատ անունը ձևականորեն մնաց անփոփոխ, բայց դա իր աշխարհագրական գիրքով և տարածքով այլևս եբրայերեն բնագրի Արարատ

35 Ըստ Աշխարհացույցի (հրատ. Սուքրի, էջ 42) Կորդուքը Մեծ Հայքի 6-րդ աշխարհ Կործաքի կամ Կործայքի (Մոկքից արևելք) 10 կամ 11 դավառներից առաջինն էր «զԿորդուս յորում Թման առ Ասորեստանեա...»: Հնարավոր է, որ Կորդուքը դավառի անվան տակ Հին աղբյուրները նկատի ունեն ամբողջ Կործայք աշխարհը, որ գտնվում էր Մոկքից արևելք, Պարսկահայքից արևմուտք և Վասպուրականից հարավ:

36 Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանությունեան նախնեաց մերոց. Համեմատութեամբ եբրայական և յունական բնագրաց. Վիեննա, 1929, էջ 835, ծան. 9: Սրա փոխարեն հայերեն Աստվածաշունչն ունի՝ ըստ հունարեն «Յոթանասնից» թարգմանություն «պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանց եւ Ասքանաղեան գնդին»: Այստեղ հունարենի հետեղությունը դեղձված է Մինի երկրի անունը:

37 Արամեերեն Թարգումի ազդեցությունը Հին կտակարանի ասորերեն Պեշիտոտոյի վրա մանրամասն հետազոտել է Յոզեֆ Պելեսը (Joseph Perles. Meletemata Peschiththoniana. Breslau, 1859): Այդ ասորերեն թարգմանությունը Պեշիտոտո (սլարգ) է կոչվել ի տարբերություն Հին գրական արամեերեն Թարգումի: Ըստ 3 Պեղեսի, թարգմանությունը տեղի է II դ. կեսերից մինչև IV դ. կեսերը: Թեև ըստ մասնագետների, թարգմանությունը կատարվել է եբրայերենից, սակայն սլարգ է, որ թարգմանիչները իրենց ձեռքին մշտապես ունեցել և ընդօրինակել են արգեն խմբագրված արամեերեն Թարգումը:

38 Համապատասխանում է Աստվածաշնչի Հայերեն թարգմանություն Դ Թագաւորութեանց գրքին:

լասուլ չէ, այլ նույնանուն է Կորդուքի հետ: Դա ցայտուն երևում է հետևյալ համեմատությունից: Ինչպես նշեցինք, եբրայերեն բնագրի երկու գուգահեռ զրվագներում (II Թագ. 19, 37. և ես. 37, 38) Ասորեստանի Սենեքերիմ թագավորի երկու որդիները՝ Ազրամելիք և Սարասար, իրենց հորը Նինվեում կռատան մեջ սպանելուց հետո առաջին դեպքում փախչում են Արարատ երկիրը, իսկ երկրորդ դեպքում՝ Կորդու երկիրը³⁹: Կնշանակի Արարատ երկիրը Պեշիտտոյում նույնացվում է Կորդվաց գավառի հետ: Այսպես էլ գրել է IV դարի նշանավոր մեկնիչ Եփրեմ Ասորին (+373)՝ Եսայիի հիշյալ վկայությունը կցած իր մեկնություն մեջ Սենեքերիմի հայրասպան որդիների մասին (բերում ենք լատիներեն թարգմանությունում)՝ «qui, ut dictum est, fugerant in terram Carduorum, quae et Ararat»⁴⁰ («որոնք, ինչպես ասված է, փախան Կորդվաց երկիրը, որ է Արարատ»), իսկ գուգահեռ զրվագի (II Թագ. 19, 37)՝ «in terram Ararat» (դեպի Արարատ երկիրը) բառերի կապակցությունում էլ Եփրեմն ավելացնում է՝ «montes sunt in Armenia, idem, qui et Carduoi alio nomine dicuntur, ad quos Noe arcam applicuit» («լեռներ են Հայաստանում, որոնք և նույնպես այլ անունով Կորդուք են կոչվում, որոնց վրա Նոյը կանգնեցրեց տապանը»)՝ Կնշանակի ըստ Եփրեմ Ասորու՝ Արարատ և Կորդուք նույն լեռների անուններն են, որոնք, սակայն, նա տեղադրում է Հայաստանում, հակառակ Պեշիտտոյի:

Բացի այս, Եփրեմն անդրադարձել է նաև Երեմիայի հայտնի վկայությունը (51, 27), որ ասորերեն Պեշիտտոյում դարձյալ խմբագրվել է արամեերեն Թարգումի օրինակով և Minni երկրի փոխարեն ունի՝ «Annunciate contra illam regnis Ararat et Armeniis, et Aschenez» (Կոչեցեք նրա դեմ Արարատի և Հայոց, և Ասքանագի թագավորությունները): Այս ցեղերի մասին էլ Եփրեմ Ասորին գրում է՝ «Populis, qui Carducos montes incolunt et eorum confinibus Armeniis ac Scythis» (Փողովուրդներ, որոնք բնակվում են Կորդվաց լեռներում և նրանց սահմանակից հայեր, ինչպես և սկյութներ): Ըստ այսմ, Արարատյան թագավորությունը Եփրեմը գետեղում է Կորդվաց գավառում, իսկ հայերին ընդամենը սահմանակից է համարում Արարատ-Կորդուքին, որի լեռներում իջավ Նոյան տապանը, մինչդեռ նախորդ մեկնության մեջ Եփրեմը Կորդվաց լեռները դնում է Հայաստանում: Աշխենես ցեղանվան տակ էլ հասկանում է սկյութներին:

ԱՐԱՐԱՏ-ԿՈՐԴՈՒՔ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ԼԵՐՔՈՒՄԸ

Արարատ-Կորդուք նույնացումը չի հաստատվում ոչ միայն ասուրաբաբելական պատմական արձանագրություններով և վիպական սեպագիր տեքստերով, այլև միանգամայն անհայտ է մ.թ.ա. III դ. սկզբից մինչև մ.թ.

39 Հայերեն Աստվածաշնչի նույն զրվագներում առաջին դեպքում ունենք՝ «զերծան յերկիրն Արարադայ» (Ի Թագ., ԺԹ, 37), իսկ երկրորդ դեպքում՝ «Գնացին փախստական ի Հայս» (ես. 1է, 38): Երրորդ անգամ նույն զրվագը կրկնվում է Տովբիթ գրքում (Ա. 24), դարձյալ շեշտելով Հայաստանը՝ «Եւ ոչ անցին աւուրք յիսուն՝ մինչեւ սպանին զնա (զՍենեքերիմ) երկօքին որդիքն իւր, եւ փախան նոքա ի լերինս Հայոց»:

40 Ephraem Syri Opera omnia, quae exstant Graeca, Syriace, Latine. Tom. II Syr. Et. Lat., Romae, 1740, p. 82.

41 Ephr. Syr. Opp. T. I. Syr. et Lat. Romae, 1737, p. 560.

1 դ. վերջը գործած սլաոմագիրներին՝ Բերոսոսից մինչև Փլավիոսը ներառյալ: Ուստի դարմանալի է, որ կրոնական մեկնիչների հերյուրած այդ աշխարհագրական նորամուծությունը հիմք ծառայեց նաև նորագույն ժամանակների բանասեր-ագատմաբանների նույնօրինակ հետևությունների համար:

Հիմնավոր չէ Բ. Պիոտրովսկու կարծիքը, որ իբր սկզբնապես «Արարատի լեռների էին կոչվում Քուրգիստանի լեռները, որոնք հարավից եզերում էին Վանի թագավորությունը: Սակայն հետագայում այդ տերմինը փոխազրվեց Հյուսիս, Արարատ սկսեց կոչվել Աղրիդաղի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը (հայ. Մասիս), ինչպես և Արաքսի միջին հոսանքի հովիտը (հայ. Այրարատ)»⁴²:

Ավելի ճիշտ եզրակացություն է հանգում Ս. Վեբերը, ըստ որի «Արարատ թե՛ նահանգ է և թե՛ գեթ օտարներու համար անուն մըն է, որ ամբողջ պետությունը կը ցուցնե, ինչպես Allemagne ըսելով Գերմանիան կհասկըցվի. [...] Փավստոսի»⁴³ և Խորենացվո քով անանկ տեղեր կան, որոնցմե կերևա թե հայերն ալ Արարատ ըսելով ամբողջ երկիրը կը հասկընային: Գավառին սկզբնական անվան՝ ամբողջ Հայաստանի վրա տարածվելուն մեկ հնախոսական հետքը թերևս կարելի է գտնել Ալարոգեան անվան ու բնակավայրին մեջ. Հերոդոտոս Ալարոգեան ըսելով կը հասկընա Հյուսիսային Հայաստանի մեջ ցեղ մը և իրավամբ կ'ուզեն տեսնել այս ցեղին մեջ Ուրարգեանց կամ Արարատեանց անունը: Այս հիման վրայ Ս. Գրոց մեջ Արարատ անունը Հայաստանի հին անունն է. այս անունը կը տրվեր մասամբ թագավորության մեկ նահանգին միայն և կը նշանակեր Հայոց ամբողջ թագավորության մեծագույն երկիրը»⁴⁴:

Հայոց միջնաշխարհ Այրարատը թագավորաբնակ նահանգ էր ոչ միայն Մեծ Հայքի Արշակունյաց հարստության շրջանում՝ I-V դդ., այլև հնում՝ Ուրարտուի հզորության դարաշրջանում, որովհետև այստեղ էին կառուցվել և բարգավաճել Արգիշտիիսինեյե (Արմավիր) մայրաքաղաքը, էրբռունի ամրոցը, Կարմիր բլուրի արքայական ապարանքը: Հենց այդ է վկայում մ.թ.ա. VII-VI դդ. ապրած Երեմիա մարգարեի հիշատակած Արարատյան թագավորությունը: Այս վկայությունից (Երեմ. ԾԱ, 27) կարելի է եզրակացնել, որ Արարատ թագավորանիստ նահանգի անունով էին երբայեցիք Հայաստան պետությունը կոչում Արարատ, իսկ ասորեստանցի թագավորները՝ Ուրարտու: «Հին արևելյան գրադարանի» հրատարակիչներից մեկը՝ ասուրագետ է. Վայգները, որը հատկապես զբաղվել է Ուրարտուին վերաբերող արձանագրություններով, գտնում է, թե նույնիսկ Սալմանասար Ա-ի արձանագրության մեջ (մոտ 1270 թ.) հիշված Ուրուատ (կամ դ)րին կարող է նույնացվել հետագայի Ուրարտու-Հայաստանի հետ⁴⁵: Իսկ էբ. Շրագերի կարծիքով ասորեստանցիք նախապես Ուրտու (Ուրարտու) էին կոչում Հյուսիսարևելյան Հայաստանը, և ի վերջո այդ անունը տարածվեց

42 Б. Б. П и о т р о в с к и й. Նշվ. աշխ., էջ 33:

43 Փ ա լ ո ս տ ո ս. Նշվ. աշխ., Գ, Ժ: Խ ո Ր Ե ն ա ց ի. Ա, ԻԲ (Ժան. Ս. Վեբերի):

44 Ս. Վ Ե Բ Ե ր. Արարատը Ս. Գրոց մեջ, 2. № 8, օգոստոս, 1901, էջ 226-227:

45 Altorientalische Bibliothek, Bd. I (Die Inschriften der altassyrischen Könige, bearb. Von E. Eberling, S. Meißner, E. F. Weidner). Leipzig, 1926, S. 113, Anm.

ամբողջ Հայաստանի վրա¹⁶, տեսակետ, որ ուղղակի հակառակ է Բ. Պիոտրովսկու եզրակացությունը:

Մար Աբասի մատյանում հայոց նախնի Հայկը աշտարակի կործանումից հետո, չվելով Բարելոնից, գալիս է Արարազի երկիրը¹⁷: Հ. Գեղեցերն այստեղ Արարազի երկիր է անվանում Կորդվաց կողմերը¹⁸. նրա հետ համահար է Ստ. Մալխասյանը, որը նույն դրվագի առթիվ աշխարհաբար թարգմանության ծանոթագրության մեջ նշում է «Արարատի երկիրը Արարատյան նահանգը է՝ Հայաստանի կենտրոնում, այլ նրանից արևմտահարավ ընկած երկիրը, Վանա լճից հարավ»¹⁹: Նման կարծիքին նպաստել է այն հանգամանքը, որ Արարազի երկիրը հասնելով, Հայկն այստեղ բնակություն տուն է շինում և այն ժառանգություն թողնում իր թոռ Կադմոսին: Վիեննայի Մխիթարյաններից Վահան Ինգլիզյանը, ըստ որի Արարազի երկիրն ընկած էր Նեմրոթ լեռից հարավ, սրամիտ, բայց անհաջող ստուգաբանությամբ գտնում է, որ հեղինակը (Մար Աբասը) Հայկ նահապետի թոռան Կադմոս անունն ինքն է հորինել ստորերեն «առաջին» բառից, յուրյց տալու համար, թե այդ երկիրն ամենահին հայկական նահանգն է (հարավից հաշված)²⁰, ըստ այսմ Ինգլիզյանը Կադմոս անունը համարում է Կորդուքի էպոնիմ: Նա տեղյակ է, որ Կադմոս անունը դալիս է Հին հունական առասպելից՝ դա փյունիկյան արքա Ագենորի որդին էր, որը հույներին բերեց Հին հունական այբուբենը կադմեական դիրքը:

Ինչի՞ մասին է խոսքն իրականում: Մար Աբասի մատյանից խորհանգուլ քողարած դրվագում գործ ունենք պարզապես հայ Հին հեթանոսական սովանդավեպի հետ: Բարելոնյան աշտարակաշինության ժամանակ, հսկաների ամբարտապանության պատճառով, աստվածների ցասումից ահավոր հողմ փչեց, կործանեց ամբարտակը և մարդկանց տալով միմյանց անհասկանալի լեզուներ՝ աղմուկ և շփոթ գցեց նրանց մեջ, ցրելով նրանց ամբողջ երկրի լայնությամբ: Հենց այդ ժամանակ էր, որ Տիտանյան Բելլը բռնացավ բոլոր հսկաների և դյուցազուհիների վրա, որոնցից մեկը հայոց նախնի Հայկը, խրոխտացավ նրա դեմ, երբ մարդկային ցեղը տարածվում էր ամբողջ երկրի երեսին, և իր որդիներով ու թոռներով, ընդոծիներով և նրանց հարաց եկվորներով Բարելոնից չվում է «յերկիրն Արարազայ ի կողմանս հիւսիսոյ»²¹:

Հայկական քրիստոնեական ավանդությունը յուրովի է պատմում Բարելոնյան աշտարակի կործանման մասին, որը բաղդաստելով Մար Աբասի պատմածի հետ կպարզենք հայոց նախնի Հայկի ժառանգած երկիրը. «Նւ հուր ահաբին հողմախաւն շոգի Հոգւոյն Աստուծոյ, որ սովորն է զմարդիկ յուղղութեան հաստատել, <...> այն հուր անկեալ ի վերուստ, կարեալ զաշտարակն վերուստ ի վայր փլուզեալ հոսեաց, տապաստ դաշտացն ցան

46 Eb. S c h r a d e r. Keilinschriften und Geschichtsforschung. Gießen, 1878. S. 555.

47 Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. Ա, Ժ, էջ 33:

48 Պրոֆ. Հ. Գ է լ ց է ր. Համառոտ պատմութիւն Հայոց, յաւելուածովք թարգմանչին, թարգմանեց Հ. Գր. Վ. Քալէմբարեան, Վիեննա, 1897, էջ 6 և հաջ.:

49 Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. Պատմութիւն Հայոց, թարգմանութիւնը, ներածութիւնը և ծանոթագրութիւններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի. Երևան, 1968, ծան. 27, էջ 328:

50 V a h a n I n g l i s s i a n (mechitarist). Armenien in der Bibel. Wien, 1935. S. 32.

51 Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի. Ա, Ժ, էջ 33:

և ցիր կացուցանէր: Արդ իբրև այս նոցա նորացայ անբարչատւթեանցն իրափան լինէր, ցրուեալք ընդ վիճակս իւրաքանչիւր՝ ըստ կամացն Աստուծոյ ի վերայ երկրի սփռեցան. եօթանասուն և երկու նահապետք լեզուաց կացեալ՝ ըստանեցան ընդ երկիր, հաստատեալք յիւրաքանչիւր սահմանս»⁵²: Ըստ Ագաթանգեղոսի Պատմութեան, Բաբելոնյան աշարակաշինութեան ժամանակ աստվածային հողմախառն հուրը փլուզեց աշտարակը, և մարդկային միալեզու ցեղը բաժանվեց 72 ազգի՝ իրենց առանձին լեզուներով, որոնք ցրվեցին ամբողջ երկրի երեսին՝ ի վերուստ սահմանված իրենց բնակութեան վիճակները, և 72 նահապետ կարգվեց յուրաքանչյուր լեզվի սահմաններում՝ Քրիստոսի ասլազա 72 առաքյալների թվին համապատասխան⁵³: Հայոց նախնի Հայկը՝ 72 նահապետներից մեկը, Բաբելոնից չվում է դեպի հայոց ազգի համար սահմանված վիճակը՝ Արարաղի երկիրը, որ գտնվում էր հյուսիսային կողմերում. ուստի և Հայկն իր տոհմակիցներով հասնում է մինչև Բզնունյաց ծովի հյուսիս-արևմտյան բարձրավանդակ դաշտը, իր բնակատեղին, և լեռնադաշտն անվանում է Հարք ի պատիվ Թորգոմի տան հայրերի⁵⁴: Սրանով էլ խորենացին ակնարկում է, որ Արարաղի երկիրը կոչվել է նաև «Տուն Թորգոմայ», որը հետո հայոց նախնի Հայկի անունով կոչվեց Հայք⁵⁵: Երեմիայի մարգարեութեան մեջ (ԾԱ, 27) կողք-կողքի հիշվում են Արարատյան թագավորութունը (իմա՝ Թորգոմա առևը) և Ասքանազյան գունդը, որովհետև Թորգոմը և Ասքանազը ըստ Ծննդոց դրքի եղբայրներ էին: Այնպես որ Մար Աբասի Արարաղի երկիրը եբրայական Կտակարանի նույն Արարատն է, որի մեջ էր մտնում նաև Կորդուքը:

Իսկ որ Արարաղի երկիրը հասնելով, Հայկն իր բնակութեան առաջին առևը հիմնեց և ժառանգություն տվեց իր թոռ Կադմոսին, դրանով խորենացին նկատի ունի այն սահմանապահ կուսակալությունը, որ շնորհվեց Կադմոսի տան ժառանգներին՝ Կադմյաններին: Ինչպես պարզվում է Հայկազն Արամի պատմական զրույցից⁵⁶, Կադմյանները սահմանապահ կուսակալներ էին նշանակված Մեծ Հայքի հարավում Ասորեստանի կողմից, ինչպես Սիսակյանները (Սյունյաց իշխանները)՝ արևելքում: Այս երկու սահմանապահ տոհմերի վերաբերյալ տեղեկությունը խորենացին, անտարակույս, քաղել է հայ նախարարների Զորանամակից, ըստ որի հայ նախարարներն իրենց զորքերով բաժանված էին չորս խմբի՝ երկրի չորս կողմերին՝ համապատասխան, որոնցից յուրաքանչյուրի գլուխ կանգնած էր կուսակալը կամ կողմնակալը.

«Արևմտեան դուռն
Անսեւ տուն

Արևելյան դուռն
Սիւնի

52 Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց. Տփղիս 1909, § 579, էջ 294: Տե՛ս նաև § 297. և § 321:

53 Նույն տեղում, §§ 612, 686:

54 Խ ո Ր Ե Ն ա ց ի. Ա, Ժ, էջ 34:

55 Նույն տեղում, Ա, ԺԱ, էջ 37:

56 Նույն տեղում, Ա, ԺԴ, էջ 46. «զրևելեանն և զհարաւայինն նուաճեալ [Արամայ], յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ, Սիսակեանցն զարևելս, և որք ի Կադմիայ տանն զԱսորեստանին»:

Հիւսիսային դուռն
Բղեշին Գուգարաց

Հարաւային դուռն
Կաղմեացի»⁵⁷

Զորանամակի որոշ տարբերակներում «Կաղմեացի» կուսակալի փոխարեն նշված է «կորդուացի»⁵⁸:

Ինչպես վերը տեսանք, Կարդու անվան հետ կապված վկայութունները Պեշիտոյից փոխանցվել են նաև IV–V դդ. ասորի եկեղեցական հայրերի մեկնություններին, որոնք, ինչպես եւրեմ Ասորին, աշխատել են նույնացնել Արարատ և Կարդու տեղանունները և դրանով իսկ հարթել ասորերեն Պեշիտոյի և եբրայերեն Կտակարանի միջև առաջ եկած շեղումները:

Արարատ անունը «Հայաստան թե՛ Կորդուք» մեկնելու պատճառով IV–V դդ. անդիջում բանավեճ ծավալվեց մի կողմից ասորի և հրեա, մյուս կողմից հույն, լատին և հայ եկեղեցական հայրերի ու մեկնիչների միջև: Ի պատասխան եւրեմ Ասորու և նրա այլ համախոհների վերը բերված մեկնարանություններին, Եվստատիոս Անտիոքացին (+337), հենվելով Փլավիոսի հաղորդման վրա, դրում է. «Իսկ տասանը ջրերի բարձրանալուց կանգ առավ Հայաստանի մի լեռան դաղաթին <...> և այդ տեղը այժմ բնակիչները Ապոբատերիոն (իջման տեղի) են կոչում»⁵⁹: Իսկ Կ. Պոլսի պատրիարք Հովհան Ոսկեբերանը (+405) Պողոս առաքյալի Առ թեսաղոնիկեցիս Ա թղթի մեկնության մեջ զարմացած թե զայրացած հարց է տալիս. «Հաւատայցէ՞ք արդեւք եթէ եղև ջրհեղեղ, եթէ առանցելոց ինչ բանք թուփցին ձեզ (թե՛ պառավների բամբասանք եք կարծում – Ա. Մ.). ուր և լերինք յորս տապանն դաղարեսոց վկայեն, դհայոց լերանցն ասեմ»⁶⁰: Նույն հարցը նա տալիս է նաև «Կատարյալ դրության մասին» ճառում «Մի՞թե չեք լսել ջրհեղեղի և այն համատարած կորստյան մասին <...>. մի՞թե վկա չեն դրսն Հայաստանի լեռները, ուր հանդրվանեց տապանը: Մի՞թե նրա մնացորդները մինչև այժմ չեն պահվում այնտեղ մեզ հիշեցնելու համար»⁶¹: Մինչդեռ Եպիփան Կիպրացին (310–404 թթ.) փորձում է հաշտեցնել բանավեճը և տապանի համար մի միջանկյալ հանգրվան է առաջարկում «Ջրհեղեղից հետո Նոյի տապանը կանգ է առել Արարատ լեռներին»⁶², Հայաստանի և Կորդուքի միջև. Լուբար կոչված լեռան վրա» («...μετὰ δὲ τὸν κατακλυσμὸν ἐπιστάσης τῆς λαρνακος τοῦ Νῶε ἐν τοῖς Ἀραράτ, ἀνα μέσον Ἀρμενίων καὶ Καρδύων ἐν τῷ Λουβάρ ὄρει

57 Զորանամակի բնագիրը տես՝ Н. А. Д о н ц. Армения в эпоху Юстиниана. Изд. второе, Ереван, 1971, с. 251–252.

58 Ս տ ե փ տ ն ն ո ս Օ Ր Բ է Լ Ե Ա Ն. Պատմությունն նահանգին Սիսական. Փարիզ, 1859, գլ. է, էջ 64:

59 M i g n e. Patr. Graec., t. 18, col. 753.

60 Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի Եպիսկոպոսապետի յաւետարանագիրն Մատթէոս, գիրք երկրորդ, Վենետիկ, 1826՝ ճառ քառասներորդ երրորդ. Առ թեսաղոնիկեցիս Ա, էջ 389–390, հուն. բնագիրը՝ Migne, Patr. Graec., t. 62, col. 442.

61 M i g n e. Patr. Graec., t. 56, col. 287.

62 Eriphanii Opera, ed. G. Dindorfius. vol. I, Lipsiae, 1859, p. 283.

καλουμένω»⁶³). Մեզ թվում է, որ այս բանաձևը եպիփանը վերցրել է IV դ. սկզբի պատմագիր, հայոց Տրդատ թագավորի քարտուղար Դավիթ Հոովմայեցու հունարեն «Եկլեսիաստէս» գրքից, որից մի հատված թարգմանել է Մովսես Խորենացին «Պատմութիւն սրբոց Հոիփսիմեանց» վերնագրով: Այս դրվածքում ևս, ըստ ասորական զրույցի, Նոյի տապանը կանգ է տոնում Կորիւվաց և Հայաստան գավառի միջև, Բերկրացվոց գավառի Սուլոփ լեռան գլխին: Ըստ երևույթին, Դավթի հունարեն բնագրում էլ լեռան անունը եղել է Լուբար, ինչպես եպիփան Կիպրացու մոտ, որ Խորենացին թարգմանել է Սուլոփ կամ Սաղոփ – իբր նավը, լեռան գլխին հասնելուն պես, սղոցածուկը տակից արգելակել է նրա ընթացքը, և Նոյը բացական չէլ է. «Օ՛, սաղոփ», որի համար էլ լեռը կոչվեց Սողոփ. «... նոքա [Հոիփսիմեանք] գաղտ գնացեալ ընդ մէջ Կորգուաց ընդ լեառն Սողոփ, ՚ի Բերկրացուց գաւառին»⁶⁴ <...> Բայց այս լեռին տապանն ՚ի գլուխ լեռինն, որ է Սարարադայ. և ընդ մեջ անցեալ սղոցածուկն արգելու գնաւն. և ասաց Նոյ՝ որիւոյն իւրոց, Ո՛, Սաղոփ. այսինքն թե՛ սղոցածուկն զիսեցաւ նաւիս և զնոյնս»⁶⁵ Հաստատեցին ի մուտս լեռինն զանունն Սարարադայ՝ և անուն քաղաքագեղջն կոչեցաւ Թմնիս, այսինքն թէ՛ ութ ոգիք ելին ՚ի տապանէն: Եւ անտի գնացեալ <...> ՚ի կողմն Տմորեաց, ՚ի ծառաւէտ ընկուզուտ տեղիս: Եւ անտի փոխեալ ելանեն ՚ի Հայաստան գաւառ»⁶⁷: Մեզ թվում է նույնիսկ, որ Դավիթ Հոովմայեցու այս հունարեն հատվածում, որ քաղել է եպիփանը, թաքնված է հենց Սարարադ անվան գաղտնիքը: Հանդիպելով այստեղ τοις Ἀραράτ (Արարատներին) հոգնակի անբնական արտահայտությունը հունարեն το ξεβουξε հոգի հոգնակի տրական հոլովով, երիտասարդ Խորենացին τοις Ἀραράτ կցադիր արտահայտությունը կարգացել է τοις Σαραράτ – «այսինքն՝ Սարարադի» և, ըստ այսմ, Հոիփսիմայեցու պատմության մեջ թարգմանել է «՚ի գլուխ լեռինն, որ է Սարարադայ», ուրեմն տապանը հասել է Բերկրացվոց գավառի լեռան, այսինքն՝ Սարարադի գլխին: Հունարեն τοις Σαραράτ ճշտիվ համապատասխանում է հայերեն «որ է Սարարադայ» արտահայտությանը, ուստի կարող է գիտվել իբրև Սարարադ անվան ծագման ամենահավանական վարկածը⁶⁶:

Գերմանացի հայագետ Հ. Գելցերը մատնանշում է, իբր V դ. հայ պատմիչներ Փ. Բուզանդը և Մ. Խորենացին Արարատ ասելով նկատի ունենին ոչ թե ներկայիս Մասիսը, այլ Կորգուաց աշխարհի Արարատ լեռը, որի վրա

63 Հունարեն «ἐν τοῖς ὄρεσι τοῖς Ἀραράτ» արտահայտությունը (հոգնակի տրական հոլովով) համապատասխանում է հունարեն «Ἐπιθάνανσις» թարգմանության (Gen. 8. 4) «ἐπὶ τὰ ὄρη τὰ Ἀραράτ» (հոգնակի հայցական հոլովով) խոսքին:

64 Հայաստան գավառ անունով Դավիթ Հոովմայեցին նկատի ունի ոչ թե ամբողջ Հայաստան երկիրը, այլ Հայոց ձոր գավառը, որն այսպես էր կոչվում ըստ Մ. Խորենացու (Պատմութիւն Հայոց, Ա, ԺԱ, էջ 37) մեր նախնի Հայկի շինած Հայք Դաստակերտի անունով:

65 Բերկրացվոց գավառը, որը տարբեր է Բերկրի (Առբերանի) գավառից (Վանա լճի հյուսիս-արևելքում), Մ. Երեմյանը նույնացնում է Թովմա Արծրունու մոտ հիշատակված Կրեբեպ գավառի հետ (Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի), էջ 61:

66 Նեղագիր բառերը լրացրինք Ղ. Ալիշանի հրատարակած տեքստից. – «Հին հաւատք կամ հիթանոսական կրօնք հայոց», Վենետիկ, 1895, էջ 57:

67 Սրբոյ, Հորն մերոյ Մովսիսի Խորենացույ մատենագրութիւնք. Վենետիկ, 1865, էջ 300–301:

68 Տե՛ս մեր 93-րդ ծանոթությունը:

նստել է Նոյի տապանը: Այս պարագան գիտել են տալիս նաև Յ. Մարկվարտը, է. Հերցֆելդը, Ռ. Թամսոնը և ուրիշներ: Մասնավորապես Գեյցերը վիպակոչում է խորենացու Պատմությունից Ուրմպիտգորստի Անգիր Հին գրույցները, որոնց համաձայն Քսիսութրիոսի Հոյաստան նավելուց հետո նրա որդիներից Սեմը այստեղից գնալով դեպի Հյուսիս-արևմուտք, հանդիարում է Տարոնի դաշտին և Սիմ լեռանը: Կնչանակի, խորենացին ընդունում է, որ Տարոնից դեպի Հարավ-արևելք՝ Կորդվաց կողմերում՝ Արարադում է գտնվում այն վայրը, ուր ցամաքի հանդիպեց սապանը⁶⁹: Հ. Գեյցերի տեսակետը պաշտպանում է և Մ. Արեղյանը⁷⁰: Ըստ երևույթին, Գեյցերին ծանոթ չէ խորենացու հաղորդածը, որ նույնիսկ ասորիների մեջ տարածված գրույցի համաձայն, հեղեղների ջրերը նվազելու ժամանակ տապանը կանդ է տուել ոչ թե Կորդվաց գավառում, այլ Բերկրացվոց դավառի Սողոմի լեռան գլխին: Արա հետ մեկտեղ, քանի որ խորենացու պատմած Ուրմպիտգորստի Անգիր Հին գրույցների համաձայն, Սեմը բնակվել էր տապանի ցամաք ելած տեղում⁷¹, Գեյցերը հակված է Սեմի մնացորդներին նույնացնելու այն սակավաթիվ մարդկանց հետ, որոնց հետագայում հայոց նախնի Հայկը հանդիպեց Արարադի երկրում: Խորենացին ըստ Մար Արասի պատմում է, թե Հայկը Արարադի երկիրը հասնելով, առաջին անգամ բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայրում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ առաջուց ցրվածներից՝ «Երթեալ բնակ է ի լեռնոսին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին»⁷²:

Ըստ այսմ, շատ ավելի հիմնավոր կլինի կարծել, որ Մար Արասի մատյանում Հայկին հանդիպած սակավաթիվ մարդիկ աշատրակի կործանումից հետո Բարեխոնից ցրվածներն են եղել: Նույնը վերաբերում է Տարոնի դաշտում երկայնանիստ լեռան ստորոտում բնակված Տարբանի⁷³ ժառանգներին: Դրա համար էլ պատմահայրը, երկու անգամ սակավաթիվ ցրվածներին ակնարկելով, ավելացնում է «այս արգարացուցանէ գանգիր Հին գրույցս»⁷⁴. արանով արգարանում են Անգիր Հին գրույցները: Դա երևում է նաև նրանից, որ պատմահայրը երրորդ անգամ հիշելով այս առաջագույն ցրված սակավաթիվ մարդկանց, գոհունակությամբ նշում է՝ «Բայց սքանչելի մի բան է տսում [Մար Արաս] պատմագիրը. թե շատ տեղերում ցիրուցան բնակվում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր

69 Հ. Գ է 1 ց է ր. նշվ. աշխ.:

70 Մ. Ա ք ե ո յ ա ն. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու «Հայոց պատմության մեջ». Երկեր Ը, էջ 126–129:

71 Խ ո ր Ե ն ա ց ի. Ա, Զ, էջ 25–26:

72 Խ ո ր Ե ն ա ց ի. Ա, Ժ, էջ 33:

73 Խ ո ր Ե ն ա ց ի. Ա, Զ, էջ 26: «և զանուն տեղոյն ուր բնակեցան կսչէ Յրոնս, զի անց դառաջինն սկիզբն եղև բաժանելոյ որդւոց նորա ի նմանէ» – Ստ. Մալխասյանը թարգմանում է: «Իսկ այն տեղը, որտեղ [Տարբանը] բնակվեց, կոչում է Յրոնք, որովհետև այնտեղ առաջին անգամ որդիները բաժանվեցին նրանից»: Մալխասյանը սխալվում է՝ փակագծերում ավելացնելով Տարբան անունը, որի պատճառով հիմա էլ Տարոնի դաշտն է կոչվում Յրոնք, մինչ այդ Սեմի կրտսերագույն որդիներից Տարբանի անունով դաշտը կոչվել էր Տարան: Իրականում խոսքը տապանի ցամաք ելած վայրին է վերաբերում, որը և կոչվեց Յրոնք, որովհետև այստեղ առաջին անգամ որդիները բաժանվեցին Քսիսութրիոսից:

74 Խ ո ր Ե ն ա ց ի. Ա, ԺԱ, էջ 33:

ընդհանուր նախնի Հայկի դալուստը»⁷⁵: Հեռուապես խորենացին վերստին հաստատում է, որ աշտարակի կործանումից հետո ազգերի սփռման ժամանակ առաջագույն [հայալեզու] ցրվածներն ապրում էին ամբողջ մեր երկրում, այլ ոչ միայն Կորդվաց կողմերում կամ Սիմ լեռան ստորոտում, ինչպես կարծում է Գեյցերը:

Եթե խորենացին համամիտ լիներ Հ. Գեյցերին, ապա տապանի լեռը Կորդվաց դավառում տեղագրելու համար ավելի լավ առիթ չէր ունենա, քան «Հայոց պատմության» Ա, 2 գլխում Բերտոյան Սիբիլլայի վկայակոչումը՝ Քսիսուլթրիոսի Հայաստան նավարկելու մասին, որ նույն գլխում ստորերբ առիթներով կրկնում է երեք անգամ⁷⁶, բայց ոչ մի անգամ չի հիշատակում Կորդվաց դավառում հանգրվանելը, ինչպես անում են Բերտոյանը, Բազմավեյը, Փլավիոսը:

Խորենացին մերժում է Կորդուքի հետ կապված ասորական նորամուծությունները: Ըստ Եփրեմ Ասորու՝ Երեմիա մարգարեն Արարատյան թագավորություն է անվանում Կորդվաց թագավորությունը, մինչդեռ խորենացին իրավամբ դրա մեջ տեսնում է Երեմիա մարգարեին ժամանակակից Հայոց հին թագավորությունը, ուստի և պարծանքով դրում է՝ «Եւ դի արդարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ և Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի սլատերագմ. «Հրաման սուր, ասէ, Արարատեան թագաւորութեանն և Ասքանագեան գնդին»: Եւ այս հաւաստի դոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»⁷⁷: Ինչպես տեսանք, Եփրեմ Ասորին Ասքանազ համարում է սկյուռներին էթնոնիմը, մինչդեռ Կորյունի և խորենացու համար «Ասքանազյան ազգ»⁷⁸ և «Ասքանազյան դունդ»⁷⁹ ոչ այլ ինչ են, քան «Հայոց ազգ» և «Հայոց գունդ»: Եվ վերջապես, խորենացին անուղղակի հակադարձում է Եփրեմ Ասորուն, ըստ որի Սենեքերիմ թագավորի որդիները փախան Կորդվաց երկիր, այնինչ սլատմահայրը պնդում է, որ նրանք փախան եկան մեզ մոտ՝ և մեզ նախնի սկայորդին Սարասաարին բնակություն սվեց մեր երկրի հարավ-արևմուտքում, Սիմ լեռան ստորոտում, իսկ Արդամողանին՝ հարավ-արևելքում: Ահա այսպես էին V դ. մեր քրիստոնյա հեղինակները պահպանում ե նվիրագործում դեռևս հեթանոս ժամանակներից ժառանգություն մնացած Հայոց ազգային ավանդները՝ չընկրկելով նույնիսկ շատ պատկառելի եկեղեցական հայրերի առջև: Իսկ Եփրեմը իսկապես մեծ հեղինակություն էր վայելում Հայաստանում, որի մասին վկայում են նրա բազում երկերի վաղագույն թարգմանությունները:

75 Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Ա. ԺԲ, էջ 91:

76 Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Ա. 2, էջ 23 (2 անգամ) և 26:

77 Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Ա. ԻԲ (ԻԳ), էջ 67:

78 Կ ո Ր յ ու ն. Վարք Մաչատցի. բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանություններ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941 [հատված Ա], էջ 22:

79 Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. Ա. ԻԳ (ԻԴ), էջ 70-71:

Վ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏՆՆԱԳԻՐՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ
ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ԱՍՈՐԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ

Մեր օրերում ևս հետազոտողները անհարկի տուրք են տվել ասորական Պեշիատոյի Կարգու-խմբաբուրությանը: Այսպես, հիմք ընդունելով Մուլսես խորենացու վկայությունը, որ Սահակ Մեծ կաթողիկոսը Աստվածաշունչը սկզբնապես ասորերենից է թարգմանել հայերեն, և այդ գործում հավելյալ նշանակություն տալով Պեշիատոյին, ասորագետ Հ. Մելքոնյանը ենթադրում է, թե Աստվածաշունչի այդ սկզբնական հայերեն թարգմանության մեջ ևս ասորական Պեշիատո հնագույն թարգմանության օրինակով գրված է եղել՝ «Եւ նստաւ տապանն յեօթներորդում ամսեանն ի քսան եւ յեօթն ամսոյն ի լեռնն Կարգու», և իրը հայերը տիեզերական III ժողովից (431 թ.) հետո, «Յոթանասնից»-ի հետևողությամբ լեռան Կարգու անունը վերանայված հայերեն Աստվածաշունչում փոխել են Արարատ⁸⁰: Հաստատ կարելի է պնդել, որ նշված ժողովից ասոջ էլ, ինչպես և հետո, հայերեն Աստվածաշունչում տապանի լեռը չէր կարող Կարգու կոչվել նախ այն պատճառով, որ Կորյունի և Դ. Փարպեցու առավել սուսյգ վկայությամբ Աստվածաշունչը հունարենից է հայերեն թարգմանվել Սահակ կաթողիկոսի ձեռքով⁸¹, և ապա՝ Սահակ Պարթևը, ունենալով հունական փայլուն կրթություն, քաջասելոյակ էր, որ հունարեն «Յոթանասնից» թարգմանության մեջ Արարատ երկիրը նույնացվում էր Արմենիա-Հայաստանի հետ (Ես. Լէ, 38), ուստի չէր կարող հանդուրժել որպես Հայ եկեղեցու առաջնորդ, որ հայերեն Աստվածաշունչում տեղ գտնի Պեշիատոյի Կարգու-կեղծիքը:

Վերևում մեջբերեցինք Եփրեմ Ասորու մեկնություններից համապատասխան հատվածներ՝ դիտարկելով լատիներեն թարգմանությամբ այժմ ճիշտ ժամանակն է ձայնը տալու հայ թարգմանչին: V դ. հայերեն վաղ թարգմանություններից է Դ Թափալորությանց գրքի Եփրեմ Ասորու մեկնությունը: Թեև սույն մեկնության հայերեն թարգմանության մեջ հիշատակվում է Ասորեստանի Սենեքերիմ թագավորի արշավանքը դեպի Երուսաղեմ՝ «Դարձեալ յամին չորեքտասաներորդի Եգեկիայ արքայի եկն եհաս Սենեքերիմ ի վերայ Երուսաղեմի <...>»⁸² (համապատասխանում է Աստվածաշունչի Դ Թափ. ԼԸ գլխին՝ 13 և հաջ.), սակայն չափազանց ուշագրավ է, որ հայ թարգմանիչն անմիջապես անցնում է նաբուզոդոնոսոր արքայի արշավանքներին՝ դեպի Երուսաղեմ և դուրս է թողել մեկնության այն գրվազը, որտեղ Եփրեմը հիշատակում է Սենեքերիմի սպանությունը և երկու հայրասպան որդիների փախուստը Արարատի երկիր, և դա, անտարակույս, այն պատճառով, որ Եփրեմն այստեղ Արարատի երկիրը նույնացնում է Կորգվաց լեռների հետ, ինչպես տեսանք լատիներեն թարգմանությունից՝ «լեռներ են Հայաստանում, որոնք և նույնպես այլ անունով Կորգուք են կոչվում, որոնց վրա հանգրվանեց Նոյի տապանը»: Այս փաստն անհերքելիորեն ապացուցում է Հայ եկեղեցու մերժողական վերաբերմուն-

80 Հ. Գ. Մ և Լ ք ո ն յ ա ն. Հայ-Ասորական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1970, էջ 77-78, 111:

81 Կ ո Ր Յ ո ւ ն. Վարք [հատված ԴԹ], էջ 76, Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և թուրթ առ Վահան Մամիկոնեան. Տիփլիս, 1904, գրուագ Ա, ԳԼ, Ժ, ԺԱ. էջ 16:

82 Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 458:

քր դեպի Արարատ-Կորդուք նույնացումը՝ անկախ եփրեմ Ասորու հանդես տածած հարդանքից:

Անհիմն է նաև Հ. Մելքոնյանի սլնգումը, թե Սենեքերիմ թագավորի սպանությունը դրվագում (Դ Թագ., ԺԹ 37), «Յերկիրն Արարազայ ասելով հեղինակը նկատի է ունեցել ոչ թե Արարատյան երկիրը կամ թագավորութունը, այլ Կորդվաց աշխարհը»⁸³: Իր այս կարծիքը նա հաստատում է նրանով, որ Պեշիտոտյում Եսայիի մարգարեությունից համապատասխան տեղում (Լ, 38) Արարադի փոխարեն գրված է Երկիրն Կարդու (Atra Kardū)⁸⁴: Միանգամայն անհասկանալի է, թե ինչպես կարելի է ուշ շրջանի ասորի թարգմանչի կամայական նորամուծությունը վերագրել եբրայեցի հեղինակին՝ Եսայի մարգարեին: Իսկ որ Կարդու երկիրը, այն է՝ Կորդվաց դավառը, առանձին վերցրած երբեք Արարատ չի կոչվել, այլ ընդամենը Արարատյան թագավորության կամ Հայաստանի հարավարևելյան ծայրագավառներ, այդ գիտեն նույնիսկ քաղզեացի Բերոսոսը, հույն Աղեքսանդր Բագմավեպը, հրեա սլատմագիր Հովսեպոս Փլավիոսը, չխոսելով արդեն Հայոց Աշխարհայույցի մասին, ըստ որի Կորդուքը՝ «Յորում Թման՝ առ Ասորեստանեալ» Մեծ Հայքի վեցերորդ աշխարհ Կորճէքի տասնմեկ գավառներից մեկն էր:

Անշուշտ ափսոսանքի արժանի է, որ մեր ասորագետը տեղյակ չէ արամեերեն Թարգումի մեջ թույլ տրված միտումնավոր նորամուծությունը Արարատ երկրանվան վերաբերյալ, որին հետևել են և Պեշիտոտյի թարգմանիչները:

Ասորի քարոզիչները եռանդուն տարածում էին Կորդվաց լեռան վրա իջած Նոյան տապանի իրենց տարբերակը ոչ միայն ասորերեն Հին կտակարանի՝ Պեշիտոտյի, այլև դանազան հրաշափառ զրույցների միջոցով: Դրանցից մեկն է IV դ. ասորի քարոզիչ Մար Ավգինի աշակերտ Միքայելի հեղինակած զրույցը՝ Հակոբ Մծբնացու ձեռքով Կարդու լեռից Նոյան տապանի փայտը բերելու մասին, որը պահպանվել է թե՛ ասորերեն և թե՛ հայերեն վարքերում: Այդ զրույցը կապելով հատկապես Հակոբ Մծբնացու անվան հետ, նրանք նպատակ ունեին Կորդվաց լեռներում Նոյան տապանի իջնելու վարկածը ավելի հավաստի դարձնել հայերիս համար մի անձի միջնորդությամբ, որը հատկապես մեծ հեղինակություն էր վայելում Հայաստանում:

Ընդդեմելով, որ V դ. Հայ սլատմիչներ Բուզանդը և Խորենացին Նոյան տապանի լեռը տեղադրում են Կորդվաց գավառում, սրանով հանդերձ օտարազգի և մեր հայրենի հայագետներն աչքաթող են անում Հայ սլատմիչների ու մատենագիրների մղած անզիջում բանավեճն ընդդեմ ասորի հոգևորականների տարածած զրույցների: Եվ առհասարակ, ճիշտ չէր լինի կարծել, թե մեր հին սլատմիչներն ու մատենագիրները մեզանից պակաս պատվախնդիր էին սրբազան լեռան հարցում: Ծղմարտությունը բացահայտվում է համեմատության և փաստերի համադրման միջոցով: Հակոբ Մծբնացու ձեռքով Նոյան տապանի փայտը բերելու զրույցի ասորերեն բնագրում, որ թարգմանել է ասորագետ Հ. Մելքոնյանը, ասված է. «Այն

83 Հ. Գ. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 82:

84 Նույն տեղում, էջ 81-82:

ժամանակ սուրբ Մար Հակոբը որոշեց Կնայ այնտեղ, որտեղ նստեց տապա-
նը՝ (Նոյան) Կարողութեան վրա:

Նա աղոթում և խնդրում էր Տիրոջը ցույց տալ այն, ինչ պատճառ դար-
ձավ աշխարհի նորոգմանը: Եվ եկավ նա սուրբ Մար Ավգինի մոտ, աշխա-
տեց համոզել նրան՝ իր հետ գնալ: Այն ժամանակ Մար Ավգինը ասաց
նրան. «Ես քեզ հետ գալ չեմ կարող: Բայց դու մի՛ հրաժարվիր քո ծրագ-
րից, որովհետև կլինի այնպես, ինչպես դու ես կամենում: Տերը քեզ մոտ
կուղարկի իր հրեշտակին, և նա քեզ ցույց կտա տեղն ու (Կնայի) թաղված
վայրը: Նա կպարզի ձեռքը և երկրի ծոցից կհանի օրհնված մի ասխտակ»:
Այն ժամանակ Մար Հակոբը գնաց և հասավ լեռան ստորոտը. Տիրոջ հրեշ-
տակը առաջնորդում էր նրան և գնում սրբի առջևից: Երբ հասան տապա-
նի նստած վայրը, այն ժամանակ (հրեշտակը) ցույց տալով ասաց. «Այս է
այն տեղը, որտեղ նստեց տապանը»: Այն ժամանակ սուրբը աղոթեց և դո-
հուլթյուն հայտնեց Տիրոջը: (Հրեշտակը) նրան տապանի մի տախտակ
տվեց որպես ընծա և աստվածային օրհնութուն. սուրբը մոտեցավ և վերց-
րեց փայտը մեծ ուրախությամբ:

Այն ժամանակ սուրբը տեղում վանք կառուցեց՝ Տիրոջը փառք տալու
համար: Ապա վերցրեց փայտը և ուրախությամբ գնաց Մար Ավգինի
մոտ»⁸⁵:

Այս ատրերեն վարքի հիման վրա ստեղծված Հակոբ Մծբնացու հայե-
րեն վարքում «Պատմութիւն Վարուց որբոյն Յակովբայ աշակե(րտի) մա-
րուզէի միայնակեցի»⁸⁶, այլ հրաշալիստում զրույցների շարքում լիարգմա-
նաբար գետեղված է նաև տապանի փայտը բերելու զրույցը.⁸⁷ «Յայնմ ժա-
մանակի խորհուրդ ի միտ սրկեալ երանելոյն որբոյն Յակովբայ զնալ ուր
հանգեալ տապանն ի լերինս Այրարալայ: Աղաւթս առնէր հանապաղ եւ
խնդրէր ի տեսունէ զի ցուցցէ զտապանն, որ եղեւ նորոգումն երկրի նո-
վաւ: Եւ եկեալ առ սուրբն Մարուզէ, հաւանեցուցանել զնա գնալ ընդ իւր:
Իսկ նա ոչ առնոյր յանձն, ասելով նմա վասն ծերութեանն եւ անկարողու-
թեան մարմնոյն: Ասէ ցմեծն Յակովբ, դու մի՛ խափաներ զխորհուրդդ և
մի՛ ծուլանար, լինի քեզ որսէս կամիս: Եւ առաքէ Աստուած զհրեշտակ
իւր, եւ նա ցուցանէ զինչ եւ կամ է տեսուն: Եւ մերձեցուցանէ հրեշտակն
զձեռն իւր ի ծոց երկրի եւ հանէ քեզ տախտակ մի մասն ինչ յաղագս աշ-
խատութեան քո: Իսկ սուրբն Յակովբ անյապաղ արար զգնալն իւր ի
լեռուն: Եւ իբրեւ եհաս ի ստորոտ լերինն, հրեշտակ տեսան առաջնորդէր
նմա, եւ աշխատեալ առուրս ինչ՝ յաղաւթս եկաց եւ ննջեաց: Եւ առեալ
հրեշտակին տեսան տախտակ մի, եղ ընդ սնարաւք սրբոյն: Եւ ասէ ի տես-
լեանն՝ ոչ է պարտ տեսանել քեզ զտապանն, առ զախտակդ ըստ փափա-
գանաց քոց. եւ պարթեալ ի քնոյն:

Եւ առեալ զտախտակն մեծաւ գոհութեամբ գոհանայր զտեսունէ: Եւ
յուզի անկեալ գնայր յերկիր իւր: Եւ եկեալ առ սուրբն Մարուզէ ի փա-
պարն, ուր բնակեալն էր սուրբն: Եւ պատմեաց նմա զլեռանէն, ուր էր տա-

85 Հ. Գ. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 76–77. ատրերեն բնագիրը՝ B e d j a n. Acta mart. Et sanct., t. III, p. 435.

86 Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր №1522, էջ 21բ և հաջ.:

87 Նույն տեղում, էջ 32ա և հաջ.:

պանն: Եւ առեալ զտախտակն ի ձեռս իւր եւ համբուրէ, եւ աւրհնէր զերկայնամուտթիւնն Աստուծոյ»⁸⁸:

Այս երկու զրույցները բաղդատելով, ասորագետ-թարգմանիչ Հ. Մելքոնյանը գրում է. «Ամենաակնառու տարընթերցումը կապված է լեռան անվան հետ: Ասորական բնագրում գրված է, որ Նոյան տապանը ջրհեղեղից հետո նստել է Կարդու լեռան վրա, իսկ հայերեն թարգմանություն մեջ լեռը կոչված է Արարատ: Հասկանալի է, որ խոսքը Կորդվաց աշխարհի Արարատի մասին է, և ոչ Մասիսի»⁸⁹: Չի կարելի համաձայնել ասորագետի այս հայճեպ եզրակացության հետ: Առաջին հայացքից իսկապես կարող է թվալ, թե հայերեն թարգմանության մեջ գործածված է Կարդու լեռան հայկական անվանումը՝ Այրարադ կամ Արարադ: Այդպես էլ հասկացել են մինչ այժմ բոլոր հետազոտողները՝ հայ և օտար, որից և առաջ է եկել Կորդվաց գավառի Արարատ(դ) կամ Սարարադ մտացածին լեռը: Իրականում Կորդվաց գավառում Արարադ, առավել ևս Սարարադ անունով լեռ գոյություն չի ունեցել⁹⁰: Դա նույնպիսի թյուրընկալման արդյունք է, ինչպես Կորդուք գավառի և Արարատ երկրի նույնացումը: Պարզապես հալ թարգմանիչը դեն է նետել Հակոբ Մծբնացու ասորերեն զրույցի «Կարդու լեռան վրա» խոսքը և դրա փոխարեն հայերեն թարգմանության մեջ վերականգնել հայերեն Աստվածաշնչի Մենդոց գրքի հարազատ ընթերցվածը «Ի լերինս Արարադայ», ինչպես որ ունեն եբրայական բնագիրը և «Յսթանտունից» հունարեն թարգմանությունը: Դրանով իսկ հայ թարգմանիչը և հանձինս նրա Հայ եկեղեցին մերժում են ասորական Պեշիտտումով կապված Կարդու-կեղծիքը: Եվ կարևորագույնը՝ մինչ այժմ անուշադրության է մատնվել, որ այս և այլ դեպքերում հայ թարգմանիչը ոչ միայն Կարդու լեռնանունն է փոխում Արարատ, այլ այդ Արարատ լեռը մատուցի փոխադրում, վերադարձնում է իր բնաշխարհը, որտեղ ավանդաբար գտնվե; է տապանակիր լեռը, ճիշտ այնպես, ինչպես ասորի մեկնիչները Կարդու-Արարատ նույնացումով Արարատ (Ուրարտու) երկիրը տեղադրում էին Կորդվաց գավառում: Հ. Մելքոնյանը ուշ չի դարձրել նաև, որ հայ թարգմանիչը ոչ միայն տապանի լեռան Կարդու անունն է փոխում Այրարադ, այլև դիտել է տալիս, որ այդ Այրարադի լեռները գտնվում էին Հայաստանում, ոչ թե այն երկրում, որտեղից եկել էր Հակոբ Մծբնացին: Դա երևում է հետևյալ խոսքից, որ զրույցի վերջում ավելացրել է իր կողմից V դարի հայ թարգմանիչը նշելով, թե սուրբ Հակոբը տապանի փայտը բերելուց հետո «յուզլի անկեալ դնայր յերկիր իւր» (ճանապարհ ընկալ գնայ

⁸⁸ Հ. Գ. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 76:

⁸⁹ Նույն տեղում, էջ 77:

⁹⁰ Ասուրա-բաբելական արձանագրություններում Կորդվաց լեռների նշանավոր դադար թը կոչվել է Նիբուր (տե՛ս Ernst Herzfeld, նշվ. աշխ., էջ 202, ծան. 5. այստեղ Nibur ապաված է վրիպակով՝ Nicur. Հմմտ. Ա. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 39, 53): Դա արար հեղինակներին հայտնի Ջեբել-Ջուլին է, որի վրա իբրև կանգ է առել Նոյի տապանը: Նիբուրի հետ ոմանք նույնացնում են Նիսիր փրկության լեռը Ասուրնասիրպալ II-ի արձանագրությունից (մ.թ.ա. IX դ.): Նիբուր դադարին Արարատ անվանելու համար կարող էր հիմք ծառայել թիրևս Ասուրնասիրպալի արձանագրության մեջ հիշատակված Արարգի կամ Արարագի լեռը, որը, սակայն, ասուրագետները որոնում կամ տեղադրում են արևելքում՝ ստորին Ջաբից մինչև արևմուտքում՝ Եփրատի ավազանը ընկած յայնաժամալ տարածքում կամ, որ ավելի համոզիչ է, սարգային համարում են Արարատ երկրանվան տարբերակներից մեկը:

իր երկիրը), որը բացակայում է ասորերենում՝ «Ապա [Մար Հակոբը] վերցրեց փայտը և ուրախությամբ գնաց Մար Ավգինի մոտ»: Ասել է, թե տասպանի լիոր Հակոբ Մծբնացու և Մարուզեի երկրում չէր գտնվում, այլ Հայաստանում:

Բանն այն է, որ 431 թվին Եփեսոսում գումարված III տիեզերական ժողովրդ, հաստատելով Հին և Նոր կտակարանների ստույգ բնագրերը, սլաշատնասցես արգելեց ասորերեն Հին կտակարանի Պեշիտտո կոչված խմբագրությունը⁹¹ և դրա հետ միասին նաև Կարգու լեռան վերաբերյալ կեղծիքը: Ինչպես հայտնի է, ժողովում բանագրվեց Կոստանդնուպոլսի պատրիարք Նեստորը և նրա ուսմունքը: Նեստորական ասորիները հայտարարվեցին աղանդավորներ և, ուղղափառ եկեղեցուց հալածվելով, ապաստան գտան Բյուզանդիային թշնամի Սասանյան Իրանում, սրտեղ և շարունակեցին դործածել Եփեսոսում սլաշատնասցես արգելված Հին կտակարանի Պեշիտտո խմբագրությունը, որը դարձավ նրանց Սուրբ Գիրքը⁹²: Դրան հակառակ ուղղափառ ասորիները հակոբիկները, դավանում էին Եփեսոսում հաստատված Աստվածաշունչը: Նեստորական ասորիները 430-ական թվականներին Սասանյան արքունիքի օղնությամբ նույնիսկ հաջողեցին ձեռք դրել հայ եկեղեցու կաթողիկոսական աթոռը: Նրանք Կարգու լեռը (Für Qardū) հռչակեցին Նոյան տասպանի հանգրվան և, V դ. կեսերին այդ լեռան վրա՝ տասպանի իջման ենթադրյալ տեղում, նույնիսկ վանք կառուցեցին, որ կոչեցին Տապանի վանք. ասորերեն՝ Dairā d'beth kewēla, լատինեբեն՝ Coenobium chibotae, որտեղ տարեկան տոնախմբություն էին կատարում տասպանի իջման օրվա առթիվ: Այդ ձեռնարկին հնության և հավաստիություն կերպարանք տալու համար վանքի կառուցումը նեստորական ասորիները վերագրեցին IV դ. առաջին կեսին ապրած Հակոբ Մծբնացի հայրապետին և վերջինիս ասորերեն Վարքի մեջ մուծեցին Կարգու լեռան վրա տասպանի փայտը զանելու ժամանակ Հակոբ Մծբնացու ձեռքով տեղնուտեղը վանք կառուցելու անգեկությունը, որ բացահայտ հետամուտ ընդմիջարկություն է: Ուստի բոլորովին սլատահական չէ, որ հայ թարգմանիչը V դ. առաջին կեսին տասպանի փայտը բերելու զրույցն ասորերենից թարգմանելիս, այնտեղ չի հանդիպել այդ ժամանակավրեպ հավելմանը, որ ակնհայտ երևում է ասորերեն բնագրի և դրա հայերեն հին թարգմանություններից: Ասորերեն բնագիր (թարգմ. Հ. Մելքոնյանի)՝ «Սուրբը (Հակոբ Մծբնացին – Ա. Մ.) մոտեցավ և վերցրեց փայտը մեծ ուրախությամբ: Այն ժամանակ սուրբը տեղում վանք կառուցեց Տիրոջը փառք տալու համար: Ապա վերցրեց փայտը և ուրախությամբ գնաց Մար Ավգինի մոտ»: Հայերեն հին թարգմանություն՝ «Եւ առեալ զտախտակն մեծաւ գոհուութեամբ գոհանայր զտեառնէ: Եւ յուղի անկեալ գնայր յերկիր

91 Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 111:

92 Ըստ Դիոնիսիոսի ժամանակագրության, 1077 թվին (Քրիստոսի 766 թվականին) Կարգու լեռան վրա գտնված Տապանի վանքը երկնային կայծակի հարվածից մոխրակույտի վերածվեց՝ այնտեղ հավաքված ողջ նեստորական բաղմունքյան հետ մեկտեղ (Joseph S. Assemani, Bibliotheka Orientalis. Roma, 1725, t. II, p. 113): Ավելորդ չէ նշել, որ Մասիս (Արարատ) լեռան վրա ևս Ակոռի գյուղից վերև միջին դարերում կառուցվել էր մի եկեղեցի՝ ի հիշատակ Նոյան տասպանի իջման, որը 1840 թ. հուլիսի 2-ին հրաբխի ժայթքման ժամանակ կործանվեց:

իւր: Եւ եկեալ առ սուրբն Մարուգէ ի վիսալարն, ուր բնակեալն էր սուրբն»:

Աւաւել անհանդուրժող է այս բանավեճում Փափստոս Բուզանդը: Վերը բերված թե՛ ասորերեն և թե՛ հայերեն զրույցներում դրեթե նույն բովանդակութեամբ պատմվում է Հակոբ Մծբնացու ձեռքով տապանի վայտը բերելու մասին: Եվ ուշագրավ է, որ երկու զրույցներում էլ որևէ հիշատակութուն չկա, թե տապանի իջման լեռը որտե՞ղ և ո՞ր երկրում է գտնվել: Սրան հակառակ, Փափստոս Բուզանդը Հակոբ Մծբնացու հայերեն Վարքի այս նույն դրվագն իր «Հայոց պատմութեան» մեջ զետեղելով (գալր. Գ, գլ. Ժ), «Առեյլայն» բանավեճում է ասորի վարքագրի հետ. պատմիչը չի բավարարվել Հայ թարգմանչի նման միայն Կարգու լեռնանունը Այրարադ փոխելով, այլ եռանդագին հայկականացրել է այդ Այրարադ (Սարարադ) լեռը, նշելով ու մատնանշելով, որ լեռը գտնվում էր Հայաստանում, Հայոց լեռներում, Այրարատյան տերութեան սահմաններում, ահավասիկ «Զայնու ժամանակաւ խաղաց զնաց մեծ եսլիսկոսլոսն մծբնացուց, այր սքանչելի ծերունի, վաստակասէր ի գործս ճշմարտութեան, որում անուն Յակոբ, <...> այր ընտրեալ յԱստուծոյ, յիւրմէ քաղաքէ անտի դալ հասանել ի լեռինս Հայոց, ի լեռունն Սարարադայ՞ ի սահմանս Այրարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց. այր լի շնորհօքն Քրիստոսի, որպէս զօրութիւնք նշանաց և արուեստից լինէին ի ձեռաց նորա: Սա եկեալ ցանկացեալ փափաքեալ մեծաւ տենչանօք աղաչէր զԱստուած տեսանել զվրկական տապանն նոյեան շինուածոյն, զի յայս լեռին հանդեաւ նա ի ջրհեղեղէն, քանզի զամենայն ինչ որ հայցէր, առնոյր ի Տեառնէ: Ապա մինչդեռ ելանէր ընդ դժուարին ընդ անջրդի ընդ ափափայսն անապատին Սարարադեան լեռինն, աշխատեցան և ծարաւեցան նա և որք ընդ նմայն էին: Ապա դնէր ծուներ մեծն Յակոբ ի վերայ երկրին. և կայր յաղօթս առ Տէր. և ի տեղուջն՝ ուր եղեալ էր զգլուխ իւր՝ բզխեաց աղբիւր, և արբին նա և որ ընդ նմայն էին. որ մինչև ցայսօր ասեն այնմիկ աղբիւր Յակոբայ: Եւ ինքն ի նմին աշխատեալ դեպերէր՝ զխնդրելին տեսանել առանց յապաղութեան, առնէր աղօթս առ տէր:

Արդ իբրև էր նա խոնճեալ ի վեր ի դժուարին տեղուջն մօտ ի կատարն և կարի վաստակեալ էր, ննջեաց նա. և եկն հրեշտակ Աստուծոյ և ասէ ցնա. Յակոբ, Յակոբ: Եւ նա ասէ. Աւասիկ Տէր: Եւ ասէ հրեշտակն. Ահա ընկալաւ Տէր զաղաչանս քո, և կատարեաց զխնդրուածս քո. այդ, որ կայ ընդ սնարս քո, է ի փայտից տապանակին. ահա բերի քեզ, անտի է այդ. զի այլ մի՛ ևս յաւելցես տեսանել զայն. զի Տէր այդպէս կամեցաւ: Եւ մեծաւ խնդութեամբ յօտն կացեալ, բազում գոհութեամբ երկիր պագանէր Տեառն, և տեսանէր զտախտակն՝ իբրև զի կացնեաւ հատեալ հանեալ ճեղքեալ ի

93 Մ. էմինը և Ստ. Մալխասյանը ենթադրում են, թե Սարարադ անունը Փափստոսի մոտ առաջ է եկել «ի լեռինս Արարադայ» կից գրված բառերի սխալ տրոհումից՝ «ի լեռինս Արարադայ»: Թվում է, թե Փափստոսի աղբյուրը Հակոբ Մծբնացու Վարքը, որը հայտնի էր այն ժամանակ հիշյալ հայադեաներին, իսկապես արդարացնում է նրանց վարկածը. որովհետև այստեղ իրոք առկա է «ի լեռինս Արարադայ» արտահայտությունը: Չնայած սրան, հազիվ թե կարելի է հավաստել, որ որևէ Հայ մատենագիր չկարողանար ճիշտ տրոհել Ծննդոց դրքի այդ շատ սովորական արտահայտությունը: Ուստի այդ վարկածը մեզ համար ընդունելի չէ: Այդ շինծու Սարարադ անվան մասին մենք ունենք այլ բացատրություն (տես էջ 20):

մեծ ինչ փայտից: Եւ առեալ դառնայր անտի, Հանդերձ շնորհատուր պարգևելովն, և որք ընդ նմայն երթեալք՝ իւրովքն ճանապարհորդ լինէր»⁹⁴:

Փ. Բուզանդը նույնիսկ ս. Հակոբի շարժման ուղղութիւնն է փոխում: Նրա սկզբնաղբյուրն ասում է, թե սուրբ Հակոբը գնաց, ուր ասպանն էր իջել՝ «գնալ ուր հանգեաւ տապանն», մինչդեռ հայ պատմիչը շեշտում է, թե ս. Հակոբն իր քաղաքից հկալ հասալ Հայոց լեռները՝ (Ս)արարադ(տ) լեռը, որ Արարատյան տեքուսթյան սահմաններում էր՝ Նոյան տապանի լեռը բարձրանալու համար. «յիւրմէ քաղաքէ անտի դալ հասանել ի լեռինս Հայոց, ի լեռանն (Ս)արարադայ ի սահմանս Այրարատեան տէքուսթյան, ի գաւառն Կորգուաց»:

Թվում է, թե Փ. Բուզանդի «Հայոց պատմութեան» մեջ Նոյան տապանի կապակցութեամբ Կորգուաց գավառի հիշատակումը միանգամայն ավելորդ է և պետք է համարել հետագա ընդմիջարկութիւն երկու պատճառով՝ նախ Փափասոսի օգտագործած աղբյուրում՝ Հակոբ Մծբնացու հալերեն վարքում, արդեն իսկ ջնջված էր Կորգու անունը, և Փափասոսը չէր կարող այն վերականգնել: Եվ ապա V դ. երկրորդ կեսին, երբ գրվում էր Փափասոսի պատմութիւնը, Նոյան տապանի հանգրվանի հարցը և Կարգու լեռան մերժումը իբրև Նոյան տապանի լեռ՝ ձեռք էր բերել բացահայտ հակահետադարձ պայքարի բնույթ: Հավելումն արված է այն միտումով, իբրև Հակոբ Մծբնացին Նոյան տապանի փայտը բերել է Կորգուաց գավառից⁹⁵. մինչդեռ անկարելի է, որ V դ. կեսին հայ պատմիչը հետևեր արգելված Պեշիտոսյին և դրանով սոն տար նեստորական ասորիների նկրտումներին:

ՀԻԵՐՈՆԻՄՈՍԻ ԵԶԱԿԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՊԱՆԱԿԻՐ ՄԱՍԻՍ ԼԵՌԱՆ ՄԱՍԻՆ

Կորգուաց լեռների դադաթը, ինչպես էլ այն կոչվելիս լինե՛ր՝ Նիսիր, Նիրուր, Գուգրուն, Զեբել-Զուդի, իր ընդամենը 2089 մ բարձրութեամբ կարող էր հարմար դալ միայն Միջագետքում ծնունդ առած ջրհեղեղյան առասպելին: Կորգուաց լեռների հետ չէր կարող կապվել Համաշխարհային ջրհեղեղից մարդկային ցեղի վերկուսթյան հույսը: Այդպիսի աստվածային սլատահասից փրկագործող լեռը պետք է որ անհամեմատ ավելի պատկառելի բարձրութիւն ունենար:

Պատահական չէ, որ զանազան հեղինակների հաղորդած ավանդութիւններում, ինչպես և հայ ժողովրդական բանահյուսութեան մեջ հատկապես շեշտվում է փրկարար լեռան «խոշոր», «բարձր», «ամենաբարձր» լինելու հանգամանքը:

Այսպես, 144 հատորանոց Համընդհանուր պատմութեան հեղինակ, համապարփակ գիտելիքների տեր Նիկողայոս Դամասկացին չէր կարող, ան-

94 Փափասոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Գ, Ժ, էջ 36, 38:

95 Եղիշեի և Փ. Բուզանդի երկերում ասորի հոգևորականների և մասնավորապես նեստորական ասորի եպիսկոպոս Բարձումայի ձեռնմխութեան մասին վկայում են Ղ. Փարպեցին և Թովմա Արծրունին. այդ առթիվ ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Հայ եկեղեցու և Հայոց պետութեան փոխհարաբերութիւնները V դարի հայ մասնագրութեան մեջ» («Հայոց եկեղեցի և պետութիւն», Երևան, 2000, էջ 54–55):

չուշա, տեղյակ չլինել ջրհեղեղի քաղդեական առասպելին, բայց նրա հեղինակած պատմությունից 96-րդ հատորում տապանը հանգրվանում է ոչ թե Հայաստանի Կորդվաց լեռներում, ինչպես ավանդում է Բերոսոսը, այլ «Մինիաս երկրից վերև, Հայաստանում գտնվող Բարիս անունով խոշոր լեռան վրա, որտեղ շատերը մեծ հեղեղի ժամանակ ապաստան գտան...»: Ուրեմն շատերի ապաստան կարող էր լինել միայն խոշոր լեռը:

Այս իմաստով բաղմամբիվ հիշատակարանների մեջ եղուկի արժեք է ներկայացնում լատին նշանավոր աստվածաբան և մեկնիչ Հիերոնիմոսի (342–420) մեկնությունը: Լատիներեն Աստվածաշնչում Եսայիի մարգարեությունից 37, 38 վկայությունից առթիվ, որտեղ խոսվում է Ասորեստանի Սենեքերիմ թագավորի երկու հայրասպան որդիների «Արարատ երկիրը» (in terram Ararat) փախչելու մասին, Հիերոնիմոսը ուշադրավ բացատրություն է տալիս Արարատ անվան առթիվ: Սրանով հանդերձ նա եղակի սեղեկություն է հաղորդում Հայաստանի և Նոյան տապանի հանգրվանի վերաբերյալ իր ժամանակ գոյություն ունեցած ավանդության մասին: Բերում ենք նրա լատիներեն բնագիրը և մեր թարգմանությունը.

“Qui (Adramelech et Sarasar) cum fugissent in terram Ararat, quod intelligitur Armenia, <...> Ararat autem regio in Armenia campestris est, per quam Araxes fluit, incredibilis ubertatis, ad radices Tauri montis, qui isque illuc extenditur. Ergo et arca, in qua liberatus est Noe cum liberis suis, cessante diluvio, non ad montes generaliter Armeniae delata (var. deleta) est, quae appellatur Ararat, sed at montes Tauri altissimos, qui Ararat imminent Campis”⁹⁶ – «որոնք [Ադրամեղեք և Սարասար], փախան Արարատ երկիրը, որ հասկացվում է Հայաստան. <...> Արարատը, բացի այդ, դաշտային նահանգ է Հայաստանում, որի միջով հոսում է Արաքսը, – անհավատալի պտղաբերությունով [Հայանի]՝ Տավրոսի լեռների ստորոտում, որ մինչև այստեղ է ձգվում: Ուրեմն և տապանը, որի մեջ վերկվել է Նոյն իր զավակներով, ջրհեղեղից տարվելով իջել է ոչ թե ընդհանրապես, Արարատ կոչվող Հայաստանի լեռներում, այլ Տավրոսի ամենաբարձր գագաթին, որ վեր է խոյանում Արարատ(յան) դաշտի (բառացի դաշտերի – campis) վրա»:

Սույն եզակի նկարագրությունից մեջ Հիերոնիմոսը երեք անգամ, կարծես միտումնավոր, շեշտում է, որ Արարատ կոչվում էր Հայաստանում ոչ թե տապանի իջման լեռը, այլ այն նահանգը (regio) կամ դաշտավայրը (campis), ինչպես և ընդհանրապես Հայաստանը, որտեղ գտնվում էր Տավրոսի ամենաբարձր գագաթը:

Նույն կերպ է նկարագրում Արարատյան դաշտը նաև Մովսես Խորենացին՝ «Բարձրագագաթ լեռներով շրջապատված մի խոր դաշտավայր, որի միջով մի կարկաչահոս գետ է անցնում արևմտյան կողմից, <...>, իսկ հարավային արևգակնասլաց լեռը, սյուրտակափառ գագաթով, ուղիղ բուսել է երկրից՝ պինդ գոտևորված մարդու երեքօրյա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հետզհետ սրվում է դեպի վեր, իսկապես մի ծերունի լեռ երիտասարդացած լեռների մեջ»⁹⁷:

96 Hieronimus Opera omnia, ed D. Vallarsi, Tom IV, col. 467. Տե՛ս նաև՝ M i g n e. Patrologia latina. T. 24. col. 403, p. 389.

97 Ն ո ռ ե ն ա ց ի (Թարգմ. Մալխ.), Ա, ԺԲ, էջ 90:

Հիերոնիմոսը հստակ տարբերակում է երկու Արարատ. առաջինը, ընդարձակ առումով, երբայական Կտակարանի Արարատ երկիրն է, Հայաստանը, ասուերական արձանագրությունների Ուրարտուն: Իսկ երկրորդը, նեղ առումով Այրարատ նահանգն է (regio)՝ Հայաստանի միջնադարում, ըստ Աշխարհացույցի՝ Մեծ Հայքի տասնհինգ աշխարհներից մեկը, որի դաշտավայրով հոսում է Արտքս գետը: Եվ այս պատճառով էլ հույն աշխարհագրես Ստրաբոնն այդ դաշտավայրն անվանում է 'Αραξηνου πεδίου⁹⁸ (Արաքսի հարթավայր), մինչդեռ Ղաղար Փարպեցին V դ. վերջին այսօրվա նման այն կոչում է «Դաշտն Այրարատն»: Հակառակ Ստրաբոնի, Հիերոնիմոսը դիտե և գործածել է դեռևս Փարպեցուց առաջ հայերեն ճշգրիտ անվանումը՝ «Ararat campus» (Այրարատի կամ Արարատյան դաշտ), որը տարածվում էր Տավրոսի լեռների ստորոտում: Այստեղ հիշված Տավրոսը Հայկական Պարն է կամ Հայկական Տավրոսը, որը հիշատակվում է նաև Ստրաբոնի և Պտղոմեոսի աշխարհագրության ձեռնարկներում:

Ըստ Պտղոմեոսի, (Անտի)տավրոսի մի ճյուղը, Կասպագոլկիայում դառնում է Տավրոսից և կտրելով Եփրատը, Հայաստանի միջով ձգվում է դեպի արևելք⁹⁹: Տարօրինակ է, որ Պտղոմեոսին ծանոթ չէ Աղատ կամ Ավագ Մասիսը: Դրա փոխարեն նա Հայաստանում հիշատակում է իբրև Տավրոսի մաս Աբաս անունով նշանավոր լեռը, որը, դատելով տրված աշխարհագրական չափումներից¹⁰⁰, գտնվում էր Կորդվաց լեռներից հյուսիս-արևելք: Մեր կարծիքով Աբաս լեռնանունը աղճատված է Աղատ կամ Ավագ մակդիրի հունարեն տառադարձումից: Այլապես անհնար է պատկերացնել, որ Պտղոմեոսն իր աշխարհագրության մեջ զանց առներ Հայաստանի և նույնիսկ ամբողջ Առաջավոր Ասիայի ամենաբարձր լեռը (5156 մ): Աբաս լեռան տեղագրումն էլ համապատասխանում է Մասիսի գտնված վայրին:

Հիերոնիմոսը քաջ ծանոթ է բիբլիական լեռան շրջապատներին: Տպավորությունն այնպիսին է, որ նա Աստվածաշունչը լատիներեն թարգմանելիս անձամբ այցելել է Հայաստան, շրջել թագավորաբնակ Այրարատ ուստանում, տեսել Արարատյան դաշտն ու նրա միջով հոսող Արաքս գետը, հիացել դաշտի աներևակայելի պտղաբերությամբ: Եվ, որ գլխավորն է, լատին աստվածաբանն իր այս դիտարկումների հիման վրա ընթերցողների համար բացահայտում է Արարատ կոչվող Հայաստանը և Արարատ կոչվող Հայկական նահանգը, ցույց տալով, որ Նոյի տապանը իջել է ոչ թե Արարատ կոչվող Հայաստանի լեռներում ընդհանրապես, այլ որոշակի՝ Արարատյան դաշտի վրա վեր խոյացող Տավրոսի ամենաբարձր գագաթին: Ու թեև Հիերոնիմոսը չի հիշատակում այդ լեռան անունը, այսուհանդերձ որևէ կասկած չի մնում նույնիսկ թերահավատի համար, որ նրա նշած տապանակիր լեռը Արարատյան դաշտի Աղատ կամ Ավագ Մասիսն է:

98 S t r a b o, XI, p. 527, 531.

99 Ptolemaei Geographia. Parisiis, 1901, Lib. V, Cap. 12, § 2, p. 934.

100 Նույն տեղում, էջ 935: Պտղոմեոսը նշել է Աբաս լեռան միջօրեականն ու գուգահեռականը՝ 77° և 41° 10', ինչպես և Կորդվաց լեռներինը՝ 75° և 39° 40': Նույն Աբաս լեռը, միայն Abos ձևով հիշում է նաև Ստրաբոնը (XI, 14,2), որը, սակայն, Յ. Մարկվարտը տեղադրում է էրզրումից հարավ, ակնհայտ ուղիղաբանությամբ Պտղոմեոսի նշած աշխարհագրական չափումներին (J. M a r k w a r t. Südarmanien und die Tigrisquellen. Wien, 1930. S. 13.):

Եթե մտածենք, որ Հիբրոնիմոսը երբեք չի եղել Հայաստանում, ապա եղրակացուլթյունը նույնքան տպավորիչ պետք է լինի, կնշանակի լատին աստվածաբանը Այրարատ նահանգի ամբողջ բնապատկերի և այնտեղ գտնվող տապանակիր լեռան մասին իր բոլոր տեղեկությունները քաղել է գրավոր աղբյուրից կամ էլ իրեն հանդիպած հայերի պատմածից, հանգամանք, որ դարձյալ վկայում է, որ մոտ 400 թվականին Հայաստանում իրոք գոյություն է ունեցել ավանդազրույց՝ Արարատյան դաշտի Մասիս լեռան գագաթին իջած տապանի մասին:

V դ. առաջին կեսի Հայ մատենագիրներն իրենց հերթին քաջ ծանոթ էին Հիբրոնիմոսին իբրև աստվածաբանի և թարգմանչի: Հայերեն վաղ թարգմանություններից մեկն է Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունից Հիբրոնիմոսի «Prologus Galeatus» առաջաբանը (բառացի՝ «Առաջաբանություն սաղաւարտեալ»), որի մեջ լատին աստվածաբանը մանրամասն տեղեկություն է տալիս եբրայերեն Կտակարանի կանոնական և պարականոն գրքերի մասին¹⁰¹:

Այժմ անդրադառնանք այն կարևոր հարցին, թե Հայ մատենագրության մեջ ե՞րբ է Մասիսն արժանացել տապանակիր լեռան պատվին և կոչվել Արարատ: Ստ. Մալխասյանցը և նրա հետ շատ հայրենի և օտար հեղինակներ կարծում են, որ Արարատ անունը և տապանակիր լեռան պատիվը Մասիսին են անցել միջին դարերում: Որքան հայտնի է, առաջինը գերմանացի հայագետ Հ. Գեյցերն էր, որ ուշ դարձրեց Հիբրոնիմոսի սույն մեկնության վրա, բայց ոչ այն նպատակով, որ դրանով հաստատի հայոց Մասիս-Արարատին վաղ միջնադարում վերագրված փրկարար լեռան պատիվը, այլ հատկապես ցույց տալու համար, իբր Հիբրոնիմոսի վկայությունը հայտնի չի եղել Հայ մատենագիրներին համեմայն գեպս մինչև VIII-X դդ., և որ Հայ պատմիչները՝ Փավստոս Բուղանդից մինչև Թովմա Արծրունի և այլք համոզված են, թե Նոյան տապանը ջրհեղեղի նվազման ժամանակ իջել է Կորդվաց լեռներում:

Գեյցերի ցիտատից հետո, նույն ոգով գրում է և Վիեննայի Մխիթարյան Վահան Ինգլիզյանը 1947 թ. «Եթե ԺԱ մինչև ԺԲ դարերն հառաջ ընդհանրապես Մասիսի ավանդությունը գոյություն ունեցած ըլլար, այն ժամանակ ապահովապես այսչափ երկար ժամանակամիջոցեն վկայություն մը մեղի հասած պիտի ըլլար: Որովհետև այս ժամանակաշրջանի շատ մը մատենագիրներ և ոմանք կրկին ու երկին անդամ Նոյի, ջրհեղեղի և տապանի մասին կխոսեին, և սակայն ամենադուրս կերպով իսկ չեն ակնարկեր թէ որ լեռան վրայ տապանն իջած է»¹⁰²: Եվ այնուհետև շարունակում է՝ Հ. Գեյցերին բուրբոնի հար և նման. «Ուրեմն ըսածներեն կտեսնվի որ Ե-Ժ դարու հայ մատենագրությունն ասորական եկեղեցվոյն հետ Կորդվաց

101 Յերոնիմայ Վասն ի քսան եւ յերկուս գիրս տո ի Հեբրայեցւոց զպատմութիւնսն բաժանելոյ. գերմաներէն-հայերէն ներածութեամբ եւ հայ-լատին բնագրով հրատարակեց Արիստակէս Վարդանեան Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1920, էջ 58-76: Կարծիք կա, որ այս հնագույն թարգմանությունը կատարվել է հունարենից՝ ավագ թարգմանիչներից մեկի ձեռքով. տես Նորայր Բիւզանդացի, Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տիփլիս, 1900, էջ 26:

102 Վ. Ի ն գ լ ի գ ե ա ն. Հայաստան Սուրբ Գրքի մեջ. Սուրբ գրական-աշխարհագրական ուսումնասիրություն. Վիեննա, 1947, էջ 42:

լինոն իբր տապանակիր լին իճանչնա և Մասիսի մասին իբր այնպիսի բան չի դիտեր»¹⁰³:

Այսպես, վ. Ինգլիզյանը բառացի կրկնում է այն, ինչ դրանից ավելի քան 50 տարի առաջ ասել էր դերմանացի հայագետը, կարծես այդ ընթացքում ոչինչ չի փոխվել հայ բանասիրության մեջ: Եվ եթե հայ հեղինակն է անհաղորդ հայրենի մատենագրության ընձեռած նյութերին, ապա ինչ կարելի է պահանջել օտար հեղինակներից: Մինչդեռ արդեն իսկ Հայոց Պատմության սկզբում պատմահայր Սովսես Խորենացին նշում էր, որ Ջրհեղեղի և Նոյի Հայաստան նավարկելու զրույցը շատ ավելի հաճախ Արամյան (հայոց) աղբի հին մարդիկ (ծերերը) փանդիուի նվազակցությամբ հիշատակում են ցույցերի և պարերի երգերում. «Բայց առաւել յաճախաբոյն հինքն Արամագնեայց ի նուագս փանդուան և յերգս ցցոց և պարուց ցայտոսիկ ասեն յիշատակաւ. եւ այսոքիկ զրոյցք սուտ և կամ թէ արգարե լեալ մեզ չէ ինչ վոյթ»¹⁰⁴: Անկախ «ցցոց, ցույցք» բառին տրված հակասական իմաստներից¹⁰⁵, Խորենացու այս չափադանց ուշարժան տեղեկությունից հետևում է, որ Ջրհեղեղի բուն հայկական ավանդությունը լայն տարածում ունի V դ. Հայաստանում, ցուցաբերվում էր ժողովրդական հանդեսներում, ինչպես սույն աշխատության սկզբում մեր հիշատակած Ջրհեղեղի էլամերեն բեմագրությունը «Փիլգամեչ» էպոսից, և երգվում էր փանդուահար ծեր գուսանների նվազակցությամբ:

Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Ավագ Մասիսը հռչակված է եղել Նոյան տապանի հանգրվան հենց Հայաստանում, գեուևս V դ.: Այդ են վկայում հայ մատենագրության մեջ պահպանված ավանդագրույցները, որոնք նոր ուժ են ստանում Հիերոնիմոսի վկայության լույսի տակ: V դարի մի այդպիսի ավանդության նշմարները մեզ մատուցում է Հայսմավուրքը:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 2711 ձեռագիր «Հայսմավուրքը» (1480 թ.) 427 էջում «Յայսմաւուր յիշատակ տեսեան սուրբ հօրն մերոյ Խաչիկ Վարդապետին» վերնագրի տակ պատմում է. «Սա էր յաշակերտաց սրբոց թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ, որ շրջեալ քարոզէր սուրբ վարդապետն Խաչիկ զբանս աստուածային դրոց վարդապետութեամբ ի լսելիս հաւատացելոց: Եւ ի տաւնի աստուածային յայտնութեանն հանդիպեցաւ նա ի գեաւղն Ակոուի, որ ստուգաբանի Արկ ուուի, յոտն Աւագ Մասեաց, վասնզի յեղանելն Նոյի ի տապանէն և յիջանելն ի լեռնէն՝ անդ տնկեաց այգի և անուանեաց զաեղին Արկուուի...»: Իհարկե, Սահակի և Մաշտոցի աշակերտների մեջ Խաչիկ կամ Խաչատուր անունով վարդապետ V դ. չի հիշատակված, բայց դա մեզ չպետք է մտահոգի: Ակներևաբար, այստեղ գործ ունենք մկրտության անվան հետ. շատ հնարավոր է, որ դա Սահակի և Մեսրոպի այն աշակերտներից էր, որ չէր կրում քրիստոնեական անուն (ինչպես Արձան, Կորյուն, Խոսրովիկ և այլն), և կրոնավոր ձեռնագրված ժամանակ մկրտվել է Խաչիկ անունով, ճիշտ այնպես, ինչպես հեթանոս Տրդատ թագավորը Գրիգոր Լուսավորչի ձեռքով Ա-

103 Նույն տեղում, էջ 61:

104 Խ ո ս ե ն ս ց ի. Ա. Զ, էջ 27:

105 Մ. Էմին «ցոյցք-ներկայացում», Հր. Աճառյան «ցուց-ցնծություն», Ստ. Մալխասյան «ցուցք-կենսապար» և այլն:

րածանի գետում մկրտվելով, կոչվեց Հովհաննես¹⁰⁶: Ագաթանգեղոսը բերում է քրմերի որդիներից ձեռնադրված 12 եպիսկոպոսների ցուցակը՝ Մովսես, Եսեբիոս, Յովհաննէս, Ադապէս, Կիւրակոս և այլն, որոնք մկրտութեան և ձեռնադրման անուններ են, բայց ոչ ամենևին քրմական:

Նոյ նահապետի ձեռքով ապստանի լեռան ստորոտում խաղողի որթ (ուսի) անկելու թեման ևս ջրհեղեղի հայկական ավանդութեան հական մասն է կազմում և հայտնի էր արդեն իսկ նախաքրիստոնեական շրջանի Հայաստանում:

Այս առթիվ մեր արդեն հիշատակած «Հոբելյանների գրքի» (մ.թ. I դ.) 7-րդ գլխից տեղեկանում ենք, որ Նոյը խաղողի որթեր անկեց Արարատի լեռներից մեկի՝ «Լուբար կոչված լեռան վրա, որին նստել էր տապանը»¹⁰⁷: Այս մասին հիշատակում է նաև Հովսեպոսը «Հրեական Հնախոսութեան» մեջ (I, 6, 3): Հովսեպոսի այն խոսքը, թե տապանի իջման տեղը հայերը (հունարեն թարգմանությամբ) Αποβατηριον (Ապոբատերիոն) են անվանում¹⁰⁸, լավազույն ապացույցն է, որ հրեա պատմագիրը հենց հայերից է լսել այս պատմությունը կամ Հայաստան այցելած իր հայրենակիցներից: Ոմանք, ինչպես Ֆ. Մալաբր, «Ապոբատերիոն» թարգմանում են «Նախիջևան» և սրանով տապանի իջման տեղը թյուրիմացարար նույնացնում են Մասիսից 100 կմ հեռավորության վրա դտնվող Նախճավան (ներկայումս՝ Նախիջևան) քաղաքի հետ¹⁰⁹: Սինչդեու Նոյի իջման տեղը կամ Նախիջևանը պետք է գտնվեր, բնականաբար, Ակոռի (Արկուռի) գյուղից վերև, Մասիսի բարձրագույն լանջին կամ դադաթի մոտ: Այդպես էլ երևում է Սաչիկ Վարդապետի հայկական զրույցից՝ «Յելանելն Նոյի ի տապանէն և յիջանելն առ ոտս Մասեաց արկ ուռի»: Հովսեպոսի «Ապոբատերիոն» բառի նշանակության անդրադարձել է լատին աստվածաբան Հիերոնիմոսը, որն էլ նրանց վկայությունը թարգմանել է այսպես՝ «Այս վայրը հայերն անվանում են¹¹⁰ իջման տեղի (Exitus) կամ ելման տեղի (Egressus)»:

Արդեն իսկ IX դ. Արարատյան դաշտի Մեծ և Փոքր Մասիսները հայ մատենագրության մեջ հանդես են գալիս լեռինք Արարատեան հանդիսավոր անունով, որի հետ Աստվածաշունչն անխզելի կապում է տապանակիր լեռան համբավը. «Դիմացից երևում էին Արարատյան լեռները՝ Ազատան Մասիս, ուր Արտավազդ Արտաշեսյանը քարավեժ էր եղել ու գլորվել կոշտ կոհակների մեջ»¹¹¹:

106 A. D i l i n a n n. Das Buch der Jubilaen oder die Kleine Genesis, aus dem Äthiopischen übersetzt. Jahrbücher der Biblischen Wissenschaft von N. Ewald, Bd II, 1849, Göttingen. 1850, S. 243.

107 Մեծին Վարդանայ Բարձրբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին. Մոսկով, 1861, էջ 60. «Իսկ սուրբ Տրդատ կոչեցեայն յաւագանէն Յովհաննէս»:

108 J o s e p h u s. Antiq. Jud. I. 90 ff. (I, 3, 5) – “αποβατηριον μιντοι τον τοπον τουτον Αρμενιοι καλουσι”.

109 F. M u r a d. Ararat und Masis, S. 62.

110 H i e r o n i m u s. Opera omnia, ed. Vallarsi, t. III, p. 125 (տե՛ս նաև՝ Onomastica Sacra, ed. de Lagarde, t. I, p. 82).

111 Թ ո վ մ ա Ա Ր Ժ Ր Ո Ը Ն Ի և Ա ն ա ն ո ւ Ն. Պատմութիւն Արձրունյաց տան (թարգմ. Վ. Վարդանյանի), դպր. Գ, գլ. ԻԹ, Երևան, 1978, էջ 259:

Թուվմա Արծրունին է պատմողը, որը, սակայն, դերադասում է հիշել Աղաան Մասիսի վիհի մեջ դահավիժած և շղթայված Արաավաղդին (ըստ Խորենացու Պատմության), քան աստվածաշնչային շատ սովորական դարձած Ջրհեղեղի դրույցը: Նույն մտքով էլ նա իր Պատմության հենց սկզբում դերադասում է մեջբերել հայ ընթերցողին անծանոթ Ջրհեղեղի ասորական դրույցը, իբր Միջերկրայքից եկած տապանն իջել է Կորդվաց լեռներում՝ պատմիչի հայրենի Վասպուրականին այդքան մոտ. «Աստվածային հրամանը կատարվելուց հետո արևմտի ջրերը տասանը բերեցին Միջերկրայքի արևելքը և այն նստեց Կորդվաց լեռներին»¹¹²:

X դ. վերջին Գրիգոր Նարեկացին իր «Մատենան ողբերգութեան» քերթվածում (բան Թ, սող 13–15) բանաստեղծական հակադրութուն է սանյծում իր մեղքերի ահավոր ծանրության և Արարատյան լեռան վիթխարի զանդվածի միջև.

«Նա զի թէ զմայրս Լիրանանու ի մի լուծ կշռոց զաւգեցից,
Եւ կամ զլեռն Արարատեան
Ի կէտ ամբարձման նժարի միոյ
Արդարութեան միջնորդ կացուցից,
Ոչ հաւասարէ այնր հարթութեան համագուգակցել»:

«Եւ Լիրանանի մայրիններն եթե գողելով շինելու լինեմ կշեռքի լծակ,
Ու նժարներից մեկի մեջ դնեմ լեռն Արարատյան»

Դարձյալ չի կարող հավասարվել նա իմ մեղքերի հետ»¹¹³:

Անշուշտ, Նարեկացին այստեղ նկատի ունի մարդկային ցեղի մեղքերը քաղով փրկարար լեռը, բայց ենթատեքստում իր սեփական մեղքերն ավելի ահավոր է համարում, քան մարդկության դործած մեղքերը:

Վարդան Արևելցու մոտ (XIII դ.) պահպանված մի վկայության մեջ, որ ըստ Լ. Խաչիկյանի քաղված է եղել Վարդանանց պատմիչ Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» գրքից, կարդում ենք. «Արարատու լեռն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւն յայտնի առնէ զնա ի Մասիս դոլ: Գոյ ի Պաղեստին և ի Գամիրս Արարատ, այլ մերս Այրարատ: Երկու դեատով և տապանաւն դեր ի վերոյ եմք քան զյոլովս: <...> ապա և զերիս բարեխօսս ունիմք առ Աստուած, զի այն որ եղև պատճառ փրկութեան միոյ տանն, լիցի և մեզ»¹¹⁴:

«Երկու դետով» ասելով հեղինակը նկատի ունի հայոց դրախտից դուրս եկող Տիգրիսն ու Եփրատը՝ երկու դետով և տապանով շատ ազգերից ավելի բարձր ենք, և դրա շնորհիվ երեք բարեխոս ունենք Աստծո առաջ:

XIII–XIV դդ. նշանավոր մտածող, բանաստեղծ և եկեղեցական գործիչ Հովհաննես Երզնկացին (1250–1329) Գրիգոր Լուսավորչին նվիրված իր

112 Նույն տեղում, դպր. Ա, գլ. Ա, էջ 42:

113 Գ Ր Ի Գ Ո Ր Ն ա Ր Ե կ ա ց Ի. Մատենան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 227: Գ Ր Ի Գ Ո Ր Ն ա Ր Ե կ ա ց Ի. Մատենան ողբերգության, թարգմ. Մ. Խերանյանի, Երևան, 1960, էջ 35:

114 Լ և ո ն Խ ա չ Ի կ յ ա ն. Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», խմբագրությամբ Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1992, էջ 245:

ներբողյաններից մեկում¹¹⁵ փառաբանում է իր հայրենի Սեպուհ լեռը հայոց աղբի մեծ Լուսավորչին ապաստանելու և նրա աճյունն իր մեջ ամփոփելու համար և այս առիթով մի առ մի թվում է նաև մյուս հռչակավոր լեռներին շնորհված փառքը, որոնց շարքում իբրև առաջինը փառաբանում է Այրարատյան լեռը՝ բարձրակառույց Մասիսը, որ համաշխարհային ջրհեղեղի ժամանակ արժանի եղավ տապանը հանգրվանելու պատվին. «Բազում լերինք ըստ դանազան պատճառաց հռչակելի անուամբ յաշխարհի մեծարեալ պատուին. զի նախ յետ համաշխարհական ջուրցն հեղեղին պատուեցաւ լեառն այրարատեան բարձրակառույցն Մասիս, տեղի հանգստեան եղեալ տասլանին, որ ունէր զխորհուրդ եկեղեցւոյ և եղեւ վերստին ծնող մարդկութեանս»¹¹⁶: Եվ այնուհետև «Ուրախ լեր լեառն Սեպուհ և խորին խորհրդով խնդա քան զայրարատեանն և բարձրակառույցն Մասիս, զի անդ տապանն հանգեաւ կազմեալն ի Նոյէ փայտեղէն նիւթով. իսկ ի քեզ տապանն ապրեցուցիչ Գրիգորիոս, կազմեալ կամացն Հօր զթութեամբ, յօրինեալ քրիստոսանման առաքինութեամբ, դեղեցկացեալ հոգւոյն սրբոյ զօրութեամբ, այն տապան ի ջուրցն արկածից զմարմինս մարդկան ապրեցուցանէր և զազգս դաւանաց. իսկ այս կենդանի տասլան ի հոսանաց մեղաց և կռապաշտութենէ զողիս բանական Հայաստան ազանց կեցուցանէր. լինէր սերմն ուղղափառութեան, որ է ճշմարիտ և բարիոք կենդանութիւն: Յայնմ տապանէ իբր ի մօր արգանդէ ծնեալ նահապետին Նոյի և պատարագ Աստուծոյ մատուցանէր ի ցամաքել ջրոյն, իսկ ի յայսմ տապանէ յորդաբուխ բան ի քաղցր քարոզէ ծնեալ վերստին Հայաստան աղբ և պատարագ Աստուծոյ կենդանւոյ և միայն ճշմարտին մատուցանեն ցամաքեալք յախտից և մաքրեալք ի մեղաց»¹¹⁷:

Նշանավոր աղբագրագետ և բանագետ Գարեգին Արվանձտյանցը դրի է առել մի հազվագյուտ գողտրիկ ժողովրդական ավանդություն Նոյան տապանի մասին՝ «Ահա Սիւփանա սարը, այդ ահագին, բարձր, մասիսակերպ սարը, զոր և թովմաս Արծրունին Մասիք կ'անվանե և գերմանացի Վագները՝ Գոռոզ լեր: Բնակիչները մեկ բան կ'երգեն այս լեռան վրա իբրև հին երգ և կ'ըսեն.

– Նոյա տասլանն եկավ ի Սիփան,

Ասաց.

«Սիփան, ա՛ռ զիս, ա՛ռ զիս»:

Սիփանն ասաց.

«Գընա՛ ի Մասիս, գընա՛ ի Մասիս,

Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս»:

Տապանն Կորդուաց լեռներեն գալով առ Սիփան՝ Գրգուռա գլխով անցեր և քսվելով կամ գրգռվելով՝ այս լեռան սուրուխ գլուխը տաչեր անցեր

115 Սուրբ Հայկական. հ. Ե. Վենետիկ, 1853, էջ 84–164: Սույն ընդարձակ ներբողյանի լրիվ վերնագիրն է՝ «Ասացուած ներբողական գովեստի ի սուրբ Լուսաւորիչն Հայոց Գրիգորիոս. Ասացեալ յօր յիշատակի նորա զոր տօնն մեծաթողով հանգիսիս ի լեառն Սեպուհ, որ է տեղի ճգնութեան նորին եւ հանգստարանի, յօգնահաւաք հանգէս քահանայական գասուց եւ վարդապետաց ոմանց եւ ժողովք հաւատացելոց բազմաց անդր գումարելոց»:

116 Նույն տեղում, էջ 123–124:

117 Նույն տեղում, էջ 127–128:

է եղեր: Սրիփան լեռը վեհափառարար յուր ձյունոտ գլուխը ամեն բարձր լեռներին վեր կը ցուցնե Վասպուրականի և Տարսնո բոլոր կողմերեն գրեթե»¹¹⁶:

Ղևոնդ Ալիշանը ևս հաղորդում է նույն ավանդությունը, միայն թե նրա մոտ Սրիփանի փոխարեն հանգես է գալիս Գրգուռ լեռը. «Ձրոց նուազելու ատեն Տապանին տատանելով յածիլն լեռնէ ի լեռ, հանդըստեան յարմար գիրք մը գտնելու, և գալով այս շատ անգամ յիշուած Ազթամարայ ձովուն կողմերը, անոր հիմայ ծանօթ լեռան մի ըսել,

«Գրգո՛ւռ, ընկալ զիս. և ասոր պատասխանն,

«Գրնա՛ ի Մասիս,

«Ձի բարձր է քան զիս»¹¹⁷:

Եվ, վերջապես, եզրափակելով, կրկին ցանկանում եմ ընդդէի, որ Հիւրոնիմոսի վերը բերված մեկնությունը՝ թվագրված մոտ 400 թ. և կնքված օտարազգի հռչակավոր աստվածաբանի ձեռքով, այն հավաստագիրն է, որում տապանակիր լեռն առաջին անգամ մանրամասն տեղագրություն մը ներկայացվում է հայկական բնաշխարհում, այն անձնագիրը, որով Մասիս կամ Արարատ լեռը կարող է բաց ճակատով ներկայանալ աշխարհին իբրև տապանակիր լեռ:

НА КАКОЙ ГОРЕ ВЫСАДИЛСЯ НОЕВ КОВЧЕГ?

(По ассиро-вавилонским, греко-римским, сирийским и армянским источникам)

АЛЬБЕРТ МУШЕГЯН

Р е з ю м е

На протяжении пяти тысячелетий предание о всемирном потопе подвергалось различным эсхатологическим истолкованиям в разноязычных источниках древнего мира и христианской эпохи. Вследствие этого в предании фигурируют названия нескольких гор в качестве пристанища Ноева ковчега, которые, однако, все без исключения расположены в пределах исторической Армении. К 400-му году нашей эры выдающийся теолог и переводчик латинской Библии Иеороним в своих комментариях к пророку Исаии утверждает о высадке Ноева ковчега в Армении, в области Айрарат, на высочайшей горе, возвышающейся над Араратскими полями, где течет Аракс. Об этом свидетельствует также публикуемое армянское предание с V века.

¹¹⁶ Գ ա ռ ե գ ի ն Ս Ր Վ ա ն ձ ա յ ա ն ց. Երկիր, հ. 1. Երևան, 1978, էջ 53:

¹¹⁷ Ղ. Ա լ ի շ ա ն. Հին հաւասք կամ Հեթանոսական կրօնք հայոց. Վենետիկ, 1895, էջ 56-57:

ON WHAT MOUNTAIN DID NOAH'S ARK REST?

(According to Assyrian-Babylonian, Greek-Roman, Syrian and Armenian sources)

ALBERT MOUSHEGHYAN

S u m m a r y

During five millennia the Flood's tradition underwent different eschatological interpretations in many-tongued sources of the ancient world and the Christian epoch. Consequently there are the names of several mountains in the tradition mentioned as a place of resting of Noah's ark, all of which are within the limits of historic Armenia. By the beginning of the 5th century prominent theologian and translator of the Vulgate Jerome in his commentaries to prophet Isaiah affirms that Noah's ark rested in Armenia in the region of Ayrarat, on the highest mountain rising above the Ararat valley, where flows the Arax river. It is also testified by the published Armenian tradition of the 5th century.